Իրավունքների Պաշտպանություն
Առանց Սահմանների ՀԿ

EUROPEAN ENDOWMENT FOR DEMOCRACY

Supporting Democracy Since 2013

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ

2026թ. Երևան

Զեկույցը պատրաստվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ի կողմից ժողովրդավարության եվրոպական հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Նպաստել դատական համակարգի անկախությանը և արդարադատության հասանելիությանը» ծրագրի շրջանակներում: Զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել ժողովրդավարության եվրոպական հիմնադրամի տեսակետների և դիրքորոշումների հետ:

Զեկույցի հեղինակներն են Հասմիկ Հարությունյանը և Դիանա Հարությունյանը: Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթները դիտարկել է Դիանա Հարությունյանը: Զեկույցը խմբագրել է Արաքս Մելքոնյանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 4

1. 2025 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ 5

1.1. Վարույթների քանակը 5

1.2. Կարգապահական վարույթ հարուցած մարմինները 6

1.3.Վարույթ հարուցելու առիթները 9

1.4. Վարույթ հարուցելու հիմքերը 10

1.4.1. Դատավարական իրավունքի նորմի և վարքագծի կանոնի խախտման հիմքով վարույթներ 11

1.4.2. Նյութական, դատավարական և վարքագծի կանոնի խախտման հիմքով վարույթ 14

1.4.3. Դատավարական և նյութական իրավունքի նորմի խախտումներով վարույթներ 15

1.4.4. Դատավարական իրավունքի նորմի խախտման հիմքով վարույթ 15

1.4.5. Ըստ Էության քննության չենթարկված վարույթներ 16

1.5. Դատավորի մեղքի ձևը՝ ըստ հարուցող մարմնի 16

2. ՎԱՐՈՒՅԹԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ 17

2.1. Նիստերի քանակ և մասնակցություն 17

2.2. Վարույթի հրապարակայնություն 18

2.3. Միջնորդությամբ բարձրացված խախտումների քանակ 18

2.4. Դատավորների բացատրությունները 19

2.5. Խորհրդի անդամների ինքնաբացարկի միջնորդությունները 20

3. ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ 20

4. ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎԱԾ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ 24

4.1. Նախազգուշացում կարգապահական տույժ 25

4.2. Նկատողություն կարգապահական տույժ 26

4.3. Խիստ նկատողություն կարգապահական տույժ 28

5. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ 31

6. ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ 36

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ 48

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 49

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դատավորների կարգապահական պատասխանատվությունը դատական իշխանության անկախության, արդյունավետության և հաշվետվողականության ապահովման կարևորագույն ինստիտուտներից է, որը պետք է իրականացվի օրինականության, դատական գործունեությանը չմիջամտելու, դատավորների անկախությունը հարգելու և հեղինակությունը բարձր պահելու, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության, կամայականության բացառման սկզբունքների հիման վրա:

Դատավորների կարգապահական պատասխանատվության օրենսդրական կարգավորումների զարգացումը, հիմնախնդիրներն ու պրակտիկ կիրառումը տարիներ շարունակ գտնվում է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) ուշադրության տիրույթում: Եվ հաշվի առնելով դատավորների կարգապահական պատասխանատվության վարույթների նկատմամբ հանրային վերահսկողության կարևորությունը՝ Կազմակերպության կողմից իրականացվում է դատավորների կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթացների մշտադիտարկում և կայացված որոշումների ուսումնասիրություն:

Սույն հետազոտությունն ամփոփում է 2025 թ.-ի ընթացքում Բարձրագույն դատական խորհրդի կողմից քննված թվով 18 վարույթների, որոնցից 4-ը՝ վերանայման ընթացակարգով, մշտադիտարկման ու կայացված որոշումների ուսումնասիրության արդյունքները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպության կողմից դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթներն ուսումնասիրվել են երկու եղանակով՝ Բարձրագույն դատական խորհրդում նիստերի մշտադիտարկման և Խորհրդի կողմից կարգապահական վարույթների քննության արդյունքում կայացված որոշումների բովանդակային վերլուծության միջոցով:

<u>Մշտադիտարկում.</u> 2025 թվականին Կազմակերպության ներկայացուցչի կողմից մշտադիտարկվել են դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ 18 վարույթ, որոնցից 14-ը եղել են նոր հարուցված վարույթներ, իսկ 4-ը՝ նախկինում քննված վարույթներ, որոնք քննվել են վերանայման

կարգով:[1] Մշտադիտարկված նիստերի ընթացքում հավաքագրվել են վարույթների քննության ընթացքին վերաբերող և ուսումնասիրության համար անհրաժեշտ փաստական տվյալներ:

Որոշումների ուսումնասիրություն. ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետության դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակված՝ Խորհրդի կողմից դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կայացված որոշումները: Վերլուծությունը կատարվել է հրապարակված որոշումների բովանդակության հիման վրա: Որոշումների բովանդակությունը, թույլ է տվել նաև ծանոթանալ վարույթ հարուցող մարմնի միջնորդությունների բովանդակությանն ու հարուցման փուլին այնքանով որքանով տեղեկությունը հասանելի է եղել:

Էլեկտրոնային գործիքի կիրառմամբ տվյալների վերլուծություն. Վարույթների մշտադիտարկման և որոշումների ուսումնասիրության արդյունքում ստացված տվյալների համակարգման և վերլուծության նպատակով մշակվել է էլեկտրոնային հարցաշար, որը ներառում է ինչպես քանակական, այնպես էլ որակական վերլուծության հարցադրումներ: Գործիքը հնարավորություն է տվել գեներացնել հավաքագրված թվային տվյալներն ու ամբողջական պատկեր կազմել կարգապահական վարույթներով կայացված որոշումների վերաբերյալ:

Միջազգային փաստաթղթերի ուսումնասիրություն. Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են նաև դատավորների կարգապահական պատասխանատվության ոլորտին առնչվող՝ Վենետիկի հանձնաժողովի և Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պետությունների խմբի (GRECO) Հայաստանին ուղղված համապատասխան զեկույցներն ու կարծիքները՝ կարգապահական մեխանիզմների վերաբերյալ ձևավորված միջազգային մոտեցումների համատեքստը ներկայացնելու նպատակով:

1. 2025 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1.1. Վարույթների քանակը

2025 թվականի ընթացքում Կազմակերպության կողմից մշտադիտարկվել են դատավորների նկատմամբ կարգապահական պատասխանատվության կիրառման վերաբերյալ Խորհրդի կողմից քննված բոլոր վարույթները:

Դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարուցված 14 վարույթների շրջանակում ներգրավված են եղել 14 դատավորներ, որոնցից 12-ը՝ արական, իսկ 2-ը՝ իգական սեռի ներկայացուցիչներ:

[1] Վերանայման կարգով քննված վարույթներից մեկը հարուցվել է 2025 թվականին, ուստի ներառվել է սույն զեկույցում:

Անհրաժեշտ է նշել, որ ուսումնասիրված կարգապահական վարույթներից երեքը հարուցված են եղել նույն դատավորի նկատմամբ, ինչպես նաև մեկ կարգապահական վարույթում ներգրավված են եղել երեք դատավորներ:

12 վարույթները հարուցվել են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորների նկատմամբ, որոնցից 4 վարույթներով ներգրավված էին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի և 6 վարույթներով՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավորները, մեկական վարույթներով Կոտայքի մարզի ու Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների դատավորները: Ուսումնասիրված երկու վարույթներ հարուցված են եղել, համապատասխանաբար, Վերաքննիչ վարչական դատարանի երեք դատավորների և Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավորի նկատմամբ:

Վարույթ հարուցող մարմնի կողմից ԲԴԽ ներկայացված վարույթների քանակը ըստ ատյանների

1.2. Կարգապահական վարույթ հարուցած մարմինները

Դատական օրենսգրքի կարգավորումների համաձայն՝ դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներ հարուցելու լիազորությունը վերապահված է 3 մարմնի՝ Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին, Արդարադատության նախարարին և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:[2]

Դիտարկված 14 կարգապահական վարույթներից 8-ը նախաձեռնվել են Արդարադատության նախարարի կողմից, 5-ը՝ Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից, 1-ը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից:

[2] Տե՛ս Դատական օրենսգիրք, 145-րդ հոդվածը



Ինչպես և վերջին տարիներին 2025թ. Խորհրդի կողմից քննված կարգապահական վարույթների մեծամասնությունը հարուցվել է Արդարադատության նախարարի կողմից: Միաժամանակ, աճել է Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի կողմից հարուցված և ԲԴԽ-ում քննված վարույթների թիվը:

Այսպես, 2023 թվականին հարուցված 18 կարգապահական վարույթներից 16-ը հարուցվել է Արդարադատության նախարարի, իսկ 2-ը՝ Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի կողմից: 2024 թվականին քննված 16 կարգապահական վարույթներից դեպքում ևս գերակշռել են Արդարադատության նախարարի կողմից նախաձեռնված վարույթները: Մասնավորապես, Արդարադատության նախարարի կողմից հարուցված է եղել 14 վարույթ, իսկ 2-ը՝ Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի կողմից: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը 2024թ.ևս վարույթներ չի հարուցել:

Ինչպես նշվել է նաև Դատավորների կարգապահական պատասխանատվության վերաբերյալ Կազմակերպության նախորդ զեկույցներում[3] Արդարադատության

[3] ԻՊԱՍ, Դատավորների կարգապահական պատասխանատվության պրակտիկան, 2023թ. հուլիս-2024թ. օգոստոս ամիսն ընկած ժամանակահատվածում քննված վարույթների ուսումնասիրություն,

նախարարի դերի առնչությամբ առկա է ԳՐԵԿՈ-ի կողմից Հայաստանի Հանրապետությանն ուղղված առաջարկ, ըստ որի Արդարադատության նախարարի դերը դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներում անհրաժեշտ է վերանայել, քանի որ այն անհամատեղելի է դատական իշխանության անկախության հետ: Ավելին ԳՐԵԿՈ-ի կողմից ընդգծվել է համապատասխան երաշխիքների ներդրման անհրաժեշտությունը, որպեսզի կարգապահական վարույթները չօգտագործվեն որպես ազդեցություն կամ գործիք դատավորների նկատմամբ: Այդ երաշխիքների շարքում նշվում է նաև դատավորների հնարավորությունը՝ բողոքարկելու կարգապահական որոշումները: ԳՐԵԿՈ-ն ընդգծել է, որ այդ լիազորությունը ներկայումս շարունակում է գործել և այս մասով առաջարկությունը չի կատարվել:[4]

Իր հերթին Վենետիկի հանձնաժողովը անդրադառնալով այս հարցին, նշել է, որ նախարարի նման լիազորությունն ինքնին հակասություն չի ներկայացնում եվրոպական չափանիշների հետ: Վենետիկի հանձնաժողովը նշել է նաև, որ նախարարի լիազորության փուլային վերացումը կարող է դիտարկվել այն ժամանակ, երբ այլ մեխանիզմները, մասնավորապես Դատավորների ընդհանուր ժողովի Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովը, կառուցվածքային և կազմային առումով ապահովեն բավարար ինստիտուցիոնալ երաշխիքներ կարգապահական գործառույթի իրականացման համար:

Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի կազմի ընդլայնումը՝ ոչ դատավոր անդամների թվի ավելացմամբ երկու անդամից հինգի, կարող է ստեղծել նախադրյալներ համակարգի վերակազմավորման համար և աստիճանաբար նվազեցնել նախարարի դերակատարությունը: Վենետիկի հանձնաժողովն ընդգծել է, որ առաջարկվող մեխանիզմները պետք է արդյունավետ աշխատեն, և միայն այդ դեպքում հնարավոր կլինի վստահաբար վերացնել նախարարի անմիջական մասնակցությունը կարգապահական գործընթացներից:[5]

Վենետիկի հանձնաժողովը, անդրադառնալով Դատական օրենսգրքի նախնական փոփոխությունների նախագծին՝ դրական է գնահատել հանձնաժողովի կազմում երեք ոչ դատավոր անդամի թվի ավելացումը՝ նշելով, որ նման կազմային

---

https://prwb.am/wp-content/uploads/2025/05/%D4%B6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81-%D5%A4%D5%A1%D5%BF%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3%D5%A1%D5%BA%D5%A1%D5%B0%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%BA%D5%A1%D5%BF%D5%A1%D5%BD%D5%AD%D5%A1%D5%B6%D5%A1%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%BA%D6%80%D5%A1%D5%AF%D5%BF%D5%AB%D5%AF%D5%A1%D5%B6-1.pdf

[4] Council of Europe, GRECO Group of States against Corruption, Fourth Evaluation Round report on Armenia, 2021, https://rm.coe.int/fourth-evaluation-round-corruption-prevention-in-respect-of-members-of/1680a3fcad

[5] European Commission For Democracy Through Law (Venice Commission) Armenia Joint Opinion Of The Venice Commission And The Directorate General Of Human Rights And Rule Of Law (DGI) Of The Council Of Europe On The Draft Amendments To The Judicial Code https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2022)044-e

հավասարակշռումը կարող է նպաստել հանձնաժողովի գործունեության առավել բաց և թափանցիկ կազմակերպմանը:

Արդարադատության նախարարությունը 2025 թվականի հունվարի 8-ին շրջանառել է «Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» նախագիծը, որով առաջարկվել է Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կազմը սահմանել 11 անդամ: Նախագծով հանձնաժողովի կազմը կներառի վեց դատավոր անդամ և հինգ ոչ դատավոր անդամ: Դատավոր անդամներից չորսն ընտրվելու են առաջին ատյանի դատարանների դատավորներից՝ յուրաքանչյուր մասնագիտացումից մեկ դատավոր, մեկը՝ վերաքննիչ դատարանների դատավորներից, իսկ մեկը՝ Վճռաբեկ դատարանի դատավորներից: Վետենիկի Հանձնաժողովը ողջունելի է համարել նշված փոփոխության առաջարկը՝ նշելով, որ կնվազեցվի դատավարական կորպորատիզմի հնարավորությունը:[6]

2026 թվականի ապրիլի 4-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ «ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նշված նախագիծն ընդունվել է: Համաձայն փոփոխությունների՝ Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը կազմված է 11 անդամից, որոնցից 6-ը դատավորներ են, իսկ 5-ը՝ ոչ դատավոր անդամներ:[7]

Այսպիսով, Արդարադատության նախարարի՝ դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու լիազորությունն էապես կախված կլինի էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի գործունեության արդյունավետությունից:

1.3.Վարույթ հարուցելու առիթները

Դատական օրենսգրքի կարգավորումների համաձայն՝ կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են՝

1. անձի, պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի հաղորդումը,
2. կարգապահական խախտման մասին զանգվածային լրատվության միջոցների հրապարակումները,
3. վարույթ հարուցող մարմնի կողմից իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի ինքնուրույն հայտնաբերումը,
4. վարույթ հարուցող մարմնի կողմից մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային

[6] Տե՛ս https://www.e-draft.am/projects/8183/about
[7] Տե՛ս http://www.parliament.am/draft_history.php?id=16001

պարտավորությունների խախտում արձանագրող՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած ակտի ուսումնասիրության արդյունքում առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի հայտնաբերումը,

5. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից դատական օրենսգրքի 73.1-ին հոդվածով սահմանված բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության արդյունքով բացասական եզրակացության տրամադրումը:

Մշտադիտարկման ենթարկված կարգապահական վարույթները հարուցվել են տարբեր առիթներով: Մասնավորապես, յոթ վարույթ նախաձեռնվել է ֆիզիկական անձանց ներկայացրած հաղորդումների հիման վրա, որոնցից երեքը՝ փաստաբանների հաղորդումների հիման վրա: Մեկ վարույթ հարուցվել է իրավաբանական անձի դիմումի հիման վրա: Երեք վարույթ հարուցվել է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, ինչպես նաև պաշտոնատար անձի հաղորդման հիման վրա: Երեք վարույթների վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու առիթը հայտնի չէ, քանի որ դրանք ԲԴԽ կողմից չեն ենթարկվել ըստ էության քննության:



1.4. Վարույթ հարուցելու հիմքերը

Դատավորների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթների հիմքում մեծամասամբ եղել են դատավարական իրավունքի նորմի խախտումներ, մի շարք դեպքերում նաև այն ներառել է վարքագծի կանոնի խախտումներ:

Այսպես, հարուցված 14 կարգապահական վարույթները վերաբերել են հետևյալ խախտումներին.

Վարույթ հարուցելու հիմքեր



1.4.1. Դատավարական իրավունքի նորմի և վարքագծի կանոնի խախտման հիմքով վարույթներ

1. Արդարադատության նախարարի կողմից Խորհրդին ներկայացված միջնորդության համաձայն՝ դատավորը դատական նիստի ընթացքում չի պահպանել քաղաքացիական դատավարության լեզվի վերաբերյալ օրենսդրական պահանջները: Մասնավորապես նշվել է, որ դատական նիստի ընթացքում դատավորը բազմիցս ռուսերեն լեզվով հաղորդակցվել է հայցվորի հետ և մասամբ վարել նիստը ռուսերենով, ռուսերենով բացատրել է դատավարական հարցեր (պետական տուրքի վճարման կարգը, դատական նիստի կազմակերպման հարցեր և այլն), ռուսերենով քննարկել է հաջորդ դատական նիստի նշանակման հարցը, հայտարարել է, որ անհրաժեշտության դեպքում կարող է ինքն անձամբ ուղղել թարգմանչի կողմից կատարվող թարգմանությունը՝ նշելով, որ լավ է թարգմանում հայերենից ռուսերեն և հակառակը, որոշակիորեն իրականացրել է հայցվորի համար թարգմանություն՝ փաստացի ստանձնելով թարգմանչի գործառույթներին բնորոշ գործողություններ: Ըստ վարույթ հարուցած մարմնի՝ այն պայմաններում, երբ դատական նիստին ներկա է գտնվել թարգմանիչ՝ դատավորը շարունակել է հայցվորի հետ հաղորդակցվել ռուսերեն լեզվով և կատարել թարգմանության տարրեր պարունակող գործողություններ: Դատավորին վերագրվող դատական իշխանությունը վարկաբեկող, ինչպես նաև դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսևորելուց զերծ մնալուն պարտավորեցնող վարքագծի կանոնի խախտումն իր բնույթով այնպիսին է, որ նյութականացված կոնկրետ հետևանքի առաջացումը պարտադիր չէ, ավելին՝ մեծամասամբ հիշյալ վարքագծի

կանոնի խախտումն է հանդիսանում դատավորի որոշակի գործողությունների ուղղակի հետևանք, ինչը բնորոշ է եղել քննարկվող իրավիճակին:[8]

2. Արդարադատության նախարարի գնահատմամբ՝ Դատավորը միջնորդության շրջանակում 2 տարի 5 ամիս շարունակ չի կայացրել գործը վարույթ ընդունելու որոշում կամ դատական ակտ և չի կատարել Ռուսաստանի Դաշնության իրավասու դատարան ուղարկելու հետ կապված անհրաժեշտ դատավարական գործողություններ, ինչպես նաև հաղորդում ներկայացրած անձին որևէ կերպ տեղեկություն չի տրամադրվել, չի տրամադրվել նաև գործի համապատասխան նյութերը: Արդյունքում՝ շուրջ 2 տարի 5 ամիս հաղորդում ներկայացրած անձին միջնորդության քննության վերաբերյալ որևէ տեղեկություն չի տրամադրվել:[9]

3. Մեկ այլ վարույթով միջնորդությամբ Արդարադատության նախարարը նշել է, որ դատարանը վճռի հրապարակման օր է նշանակել 31.05.2023 թվականը, սակայն այն «datalex.am» տեղեկատվական համակարգում հրապարակվել է միայն 14.12.2024 թվականին, և գործին մասնակցող անձանց տրամադրվել է 16.12.2024 թվականին: Այսպիսով, եզրափակիչ դատական ակտը հրապարակվել և տրամադրվել է ավելի քան 1 տարի 6 ամիս ուշ, ինչը գերազանցել է օրենքով սահմանված ժամկետները: Արդյունքում Դատավորի կողմից դատավարական ժամկետների չպահպանման հետևանքով սահմանափակվել է գործով կողմերի՝ իրենց իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը, ինչպես նաև խախտվել է արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մաս հանդիսացող՝ գործի ողջամիտ ժամկետում քննության իրավունքը:[10]

4. Արդարադատության նախարարի կողմից հարուցված այլ վարույթով դատավորը «Գործը վարույթ ընդունելու մասին» 14.04.2023 թվականի որոշումը կողմերին տրամադրել է մոտ 1 տարի 9 ամիս ուշացումով և չի ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ, որպեսզի հերթական դատական նիստերը նշանակվեն ժամանակին: Վարույթ հարուցած մարմնի գնահատմամբ նշված խախտումները հանգեցրել են գործի քննության անհարկի ձգձգման:[11]

5. Արդարադատության նախարարի կողմից հարուցված այլ վարույթով միջնորդության համաձայն՝ Վերաքննիչ դատարանը վճռում թույլ է տվել մի շարք էական խախտումներ, որոնք լրջորեն խաթարել են գործի արդար և օբյեկտիվ քննությունը: Դատարանը, նախ, անտեսել է այն հանգամանքը, որ հայցվորը քաղաքացիական ծառայող չի եղել, թեև, այս մասին հստակ պարզաբանում է տրամադրվել Քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից, որը դատարանի կողմից անտեսվել է: Երկրորդ, դատարանը ակնհայտ սխալ է

[8] Տե՛ս ԲԴԽ-83-Ո-Կ-17 որոշումը
[9] Տե՛ս ԲԴԽ-2-Ո-Կ-1 որոշումը
[10] Տե՛ս ԲԴԽ-22-Ո-Կ-5 որոշումը
[11] Տե՛ս ԲԴԽ-21-Ո-Կ-4 որոշումը

գնահատել Պետական ռեզերվի վարչության պետի կողմից տրված հրամանի իրավաչափությունը, ըստ որի դադարեցվել էր հայցվորի աշխատանքային պայմանագիրը: Բացի այդ, դատարանը անտեսել է գործով ներկայացված վկայությունները, գրավոր փաստաթղթերը և հայցվորի աշխատանքի բնույթը ապացուցող նյութերը: Դատարանը չի անդրադարձել հայցվորի կողմից ներկայացված առարկություններին, ինչպես նաև չի տվել անհրաժեշտ իրավական գնահատական գործի էական հանգամանքներին: Լիազոր մարմնի գնահատմամբ՝ Վերաքննիչ դատարանի թույլ տված դատական սխալների արդյունքում Տեսչական մարմնի համար առաջացել է ֆինանսապես ծանր հետևանք, որը դրսևորվել է պետական բյուջեից խոշոր չափի գումարի ելքագրմամբ:[12]

6. Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի կողմից Խորհրդին ներկայացված միջնորդությամբ նշվել է, որ թիվ ԵԴ1/1772/01/23 քրեական գործով 23.04.2024 թվականին կայացած դատական նիստում մեղադրյալի հարցաքննությունը սկսելուց առաջ դատավորը չի պարզաբանել նրա իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում՝ լռելու իրավունքը, իր կամ մերձավոր ազգականների վերաբերյալ ցուցմունք չտալու իրավունքը, ինչպես նաև չի նախազգուշացրել ակնհայտ սուտ ցուցմունք տալու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Բացի այդ, երբ մեղադրյալը փորձել է չպատասխանել որոշ հարցերի, դատավորը նշել է, որ եթե նա որոշել է ցուցմունք տալ, ապա պարտավոր է պատասխանել դատարանի բոլոր հարցերին, ինչի արդյունքում մեղադրյալը շարունակել է պատասխանել հարցերին: Վարույթ հարուցած մարմինը նաև արձանագրել է, որ հետագայում դատարանը հարցաքննության արձանագրությունը ճանաչել է անթույլատրելի ապացույց՝ նշելով, որ այն ստացվել է քրեական դատավարության օրենսգրքով սահմանված ընթացակարգի խախտմամբ: Միաժամանակ նշվել է, որ այդ հանգամանքը չի վերացրել խախտման բոլոր հետևանքները, քանի որ հարցաքննության ընթացքում ստացված տեղեկությունների հիման վրա կատարվել են այլ դատավարական գործողություններ և ձեռք են բերվել լրացուցիչ ապացույցներ: Դատավորի կողմից թույլ տրված խախտումները հանգեցրել են անձի՝ արդար դատաքննության և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքների սահմանափակման, ինչպես նաև մեղադրյալի՝ լռելու իրավունքի և ցուցմունք տալու պարտականությունից ազատվելու իրավունքի խախտմամբ ձեռք բերված ապացույցի հիման վրա այլ դատավարական գործողությունների կատարման:[13]

7. Մեկ այլ վարույթով Հանձնաժողովը նշել է, որ դատավորի վարույթում է գտնվել քաղաքացիական գործ՝ ըստ հայցի ֆիզիկական անձի ընդդեմ

[12] Տե՛ս ԲԴԽ-34-Ո-Կ-7 որոշումը:
[13] Տե՛ս ԲԴԽ-34-Ո-Կ-9 որոշումը

իրավաբանական անձի՝ անշարժ գույքի գրավի պայմանագիրն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին: Կայացված վճռով դատարանը բավարարել է պատասխանողի ներկայացուցչի միջնորդությունը՝ կիրառելով հայցային վաղեմություն և մերժելով հայցը: Հանձնաժողովը նշել է, որ գործի քննության ընթացքում դատավորը չի բացահայտել այն հանգամանքը, որ դատավորի պաշտոնում նշանակվելուն նախորդող երկարատև ժամանակահատվածում գտնվել է աշխատանքային հարաբերությունների մեջ նույն գործով պատասխանող իրավաբանական անձի հետ՝ զբաղեցնելով իրավաբանի պաշտոնը: Միաժամանակ, նշվել է, որ գործի նյութերից պարզ չէ, արդյոք դատավորը կողմերին հայտնել է նշված հանգամանքը կամ առաջարկել է քննարկել ինքնաբացարկի հարցը: Անկախ այն հանգամանքից, թե դատական ակտը բողոքարկվել է, թե՝ ոչ, արդեն իսկ առկա է հետևանք, որը դրսևորվել է ոչ հայցվորի օգտին դատական ակտ կայացվելու և այն հայցվորի կողմից բողոքարկվելու միջոցով, այսինքն՝ այդպիսի դատական ակտը ոչ միայն հայցվորի համար եղել է անբարենպաստ, այլև՝ հայցվորը ստիպված ներկայացրել է բողոք այդ ակտի դեմ՝ հատկապես հաշվի առնելով, որ դա, ի թիվս այլնի, առնվազն հանգեցնում է նաև գործը ողջամիտ ժամկետում քննվելու սկզբունքի խախտման:[14]

1.4.2. Նյութական, դատավարական և վարքագծի կանոնի խախտման հիմքով վարույթ

8. Հանձնաժողովը Խորհրդին ներկայացված միջնորդությամբ ներկայացրել է, որ ԵԴ2/2506/02/24 քաղաքացիական գործով Դատարանը 11.04.2024 թվականին որոշում է կայացրել անձին ոչ հոժարակամ հոսպիտալացնելու մասին՝ մինչև վեց ամիս ժամկետով: Անձը փաստացի ապաքինվել է 06.06.2024 թվականին և նույն օրը ներկայացրել դիմում՝ վճիռը վերացնելու վերաբերյալ: Դատավորը 12.06.2024 թվականին վերադարձրել է դիմումը, չնայած անձը փաստացի համարվել է ապաքինված: Հաղորդում ներկայացրած անձը հաջորդ երեք դիմումները նույնպես վերադարձվել են Դատավորի կողմից, ինչի հետևանքով անձը շուրջ 85 օր անհարկի շարունակել է գտնվել հոգեբուժական հաստատությունում և ստանալ դեղորայքային բուժում: Անձը 26.08.2024 թվականին կրկին դիմում է ներկայացրել, որը մակագրվել է այլ դատավորի: Անձի դիմումը բավարարվել է, արդյունքում՝ նախկին վճիռը վերացվել է և անձը վերջապես դուրս է գրվել հաստատությունից: Արդյունքում սահմանափակվել է հոգեբուժական հաստատությունում պահվող քաղաքացու՝ դատական պաշտպանության հիմնարար իրավունքի իրացումը:[15]

[14] Տե՛ս ԲԴԽ-52-Ո-Կ-11 որոշումը

[15] Տե՛ս ԲԴԽ-19-Ո-Կ-2 որոշումը:

1.4.3. Դատավարական և նյութական իրավունքի նորմի խախտումներով վարույթներ

9. Հանձնաժողովի դիրքորոշման համաձայն՝ Դատավորը երեք տարբեր քրեական գործերով թույլ է տվել ակնհայտ և կոպիտ դատավարական ու նյութական իրավունքի նորմերի խախտումներ:

Թիվ ԱՐԴ/0267/01/22 գործով Դատավորը, կիրառելով Քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածը, սահմանել է փորձաշրջան, սակայն դատապարտյալի վրա որևէ պարտականություն չի դրել:

Թիվ ԱՐԴ/0017/08/23 որոշմամբ Դատավորը անհիմն կերպով մերժել է քննիչի միջնորդությունը վարույթ հարուցելու վերաբերյալ այն պատճառով, որ միջնորդությունը չի համապատասխանում Քրեական դատավարության 209-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներին: Սակայն վարույթ հարուցելու փուլում Դատավորը չի անդրադարձել ներկայացված ապացուցողական գործողության բնույթին: Բացի այդ, Դատավորը հաշվի չի առել, որ միջնորդությունը վերաբերում էր բջջային հեռախոսահամարների ելքային և մուտքային զանգերի և կարճ հաղորդագրությունների վերծանմանը:

Թիվ ԱՐԴ/0018/06/23 գործով Դատավորը, մերժելով կալանքի ժամկետը երկարացնելու միջնորդությունը, ինքնուրույն կիրառել է գրավ և բացակայելու արգելք, այն դեպքում, երբ դրանց կիրառման լիազորությունը տվյալ իրավիճակում իրեն վերապահված չէր: Վարույթ հարուցող մարմինը նշել է, որ Դատավորը անտեսել է Քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթները և Վճռաբեկ դատարանի պարտադիր իրավական դիրքորոշումը: Ըստ վարույթ հարուցող մարմնի՝ դատավորի կողմից միաժամանակ թվով 3 գործերով թույլ են տրվել ակնհայտ և կոպիտ խախտումներ, որոնք իրենց համակցության մեջ առաջացրել են այնպիսի հետևանքներ, որոնք հեղինակազրկում են դատական իշխանությունը, քանի որ Դատավորը չի կիրառել ուղղակիորեն դատավարական օրենքով սահմանված այնպիսի պահանջներ, որոնք չկիրառելը չի կարող հանդիսանալ օրենքի մեկնաբանության խնդիր, քանի որ դրանք օրենքով սահմանված իմպերատիվ ու պարտադիր այնպիսի պահանջներ են, որոնց մասին Դատավորը պետք է տեղյակ լիներ՝ նախևառաջ «Դատավորը գիտի օրենքը» սկզբունքի ուժով:[16]

1.4.4. Դատավարական իրավունքի նորմի խախտման հիմքով վարույթ

[16] Տե՛ս ԲԴԽ-77-Ո-Կ-15 որոշումը:

10. Արդարադատության նախարարը նշել է, որ Դատավորը թիվ ԵԴ/1006/01/18 քրեական գործով 20.06.2019 թվականի դատավճիռը, որը օրինական ուժի մեջ է մտել 11.03.2020 թվականին, պատշաճ ժամանակում չի հանձնվել կատարման: Թեև 17.06.2020 թվականին դատարանին հայտնի է դարձել, որ դատապարտյալը գտնվում է «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում, դատավորը համապատասխան միջոցներ չի ձեռնարկել դատավճիռը անմիջապես այդ մարմին ուղարկելու ուղղությամբ և այն կատարման է ուղարկել միայն 05.05.2022 թվականին՝ շուրջ 1 տարի 10 ամիս անց:

Վարույթ հարուցած մարմինը նշել է, որ նշված անգործության հետևանքով դատապարտյալը 3 օր և ավել եղել է կալանավորված, չի օգտվել դատապարտյալի կարգավիճակից բխող իրավունքներից, ինչպես նաև առաջացել են պատժի կրման ժամկետի հաշվարկի խնդիրներ:[17]

1.4.5. Ըստ էության քննության չենթարկված վարույթներ

Մշտադիտարկված 4 վարույթներով ԲԴԽ-ում քննությունն ըստ էության չի իրականացվել՝ տարբեր պատճառներով: Մասնավորապես՝ վարույթներից երկուսով դատարանների նախագահների ներկայացրած տեղեկությունների և բուժհաստատության գրության հիման վրա Բարձրագույն դատական խորհուրդը դատավորների լիազորությունները դադարեցված է համարել առողջական հիմքով:

Մեկ այլ վարույթով դատավորը Խորհրդին ներկայացրել է հրաժարականի դիմում, որի հիման վրա ևս Խորհուրդը դադարեցված է համարել դատավորի լիազորությունները:

Մեկ վարույթ կասեցվել է Խորհրդի կողմից: Այն հարուցվել էր Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից: Բաց աղբյուրներից հասանելի տեղեկությունների համաձայն՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթը հարուցվել է նրա հայտարարագրերի ուսումնասիրության արդյունքում: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, վարույթը ԲԴԽ ուղարկելուն զուգահեռ, դիմել է նաև Դատախազություն՝ քրեական վարույթ նախաձեռնելու հարցով: Քրեական վարույթը նախաձեռնվել է, սակայն դատավորը դրա շրջանակներում որևէ դատավարական կարգավիճակ չունի: Սույն վարույթը քննարկվել է դռնփակ նիստում, որից հետո ԲԴԽ-ն որոշում է կայացրել կարգապահական վարույթը կասեցնելու վերաբերյալ:

1.5. Դատավորի մեղքի ձևը՝ ըստ հարուցող մարմնի

[17] Տե՛ս ԲԴԽ-39-Ո-Կ-10 որոշումը:

Դիտարկված կարգապահական վարույթներից 10-ի դեպքում վարույթ հարուցող մարմինն այն որակել է որպես կոպիտ անփութությամբ կատարված, 1 դեպքով՝ դիտավորությամբ, 1 դեպքով վարույթ հարուցող մարմինը չի անդրադարձել մեղքի ձևին:



Ուսումնասիրված 14 վարույթներից 10-ով դատավորները վիճարկել են ներկայացված կարգապահական վարույթի խախտման փաստի առկայությունը՝ վարույթ հարուցող մարմնին ներկայացնելով բացատրություններ: Մնացած 4 վարույթները ըստ էության քննության չեն ենթարկվել:

Դիտարկման ենթարկված վարույթներում ներգրավված 14 դատավորներից միայն 1-ն է կարգապահական պատասխանատվության վարույթի ժամանակ հանված կամ մարված չհամարվող կարգապահական տույժ ունեցել: Հարկ է նշել, որ այդ որոշմամբ նշված չէ դատավորի՝ կարգապահական տույժ ունենալու հանգամանքը, սակայն դատավորին, 2025 թվականին ԲԴԽ-ի կողմից հայտարարվել է խիստ նկատողություն:

2. ՎԱՐՈՒՅԹԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ

2.1. Նիստերի քանակ և մասնակցություն

Դիտարկված վարույթներով խորհրդում տեղի ունեցած նիստերի քանակը միջինում եղել է 3, մեկ գործով տեղի է ունեցել ընդամենը 1 նիստ[18], մեկ գործով՝ 4 նիստ[19]:

[18] Տե՛ս ԲԴԽ-19-Ո-Կ-2 որոշումը:
[19] Տե՛ս ԲԴԽ-52-Ո-Կ-13 որոշումը:

6 գործով կարգապահական վարույթի մասնակից դատավորները Խորհրդում ներկայացված են եղել նաև փաստաբանի կողմից, մնացյալ դեպքերում՝ իրենց շահերը ներկայացրել են ինքնուրույն: Ինչ վերաբերում է վարույթ հարուցող մարմնի մասնակցությանը՝ ապա դիտարկված բոլոր գործերով վարույթի հարուցող մարմինը ներկա է գտնվել նիստերին:

Բոլոր այն դեպքերում, երբ վարույթը քննվել է Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի միջնորդության հիման վրա, ապա Խորհրդում անց կացվող նիստերին մասնակցել է հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի մեկ այլ անդամ:

Արդարադատության նախարարի միջնորդության հիման վրա քննվող վարույթներով նիստերին մասնակցել են պատասխանատու փոխնախարարը և նախարարի խորհրդականը:

2.2. Վարույթի հրապարակայնություն

Դիտարկված գործերով 8-ով քննվող կարգապահական վարույթին և նիստերին անդրադարձ է կատարվել զանգվածային լրատվության միջոցների կողմից: Վարույթների լուսաբանումը պայմանավորված է եղել ինչպես գործի հնչեղությամբ, այնպես էլ գործով ներգրավված դատավորի անձով:

Բոլոր վարույթները, բացառությամբ մեկի, քննվել են հրապարակային կարգով, իսկ վարույթներից մեկով վարույթ հարուցող մարմինը միջնորդել է նյութերի ուսումնասիրությունը կատարել դռնփակության պայմաններում, որը բավարարվել է:[20] Նմանապես, բոլոր վարույթներով ապահովվել են նիստերից հեռարձակումները Խորհրդի կողմից:

2.3. Միջնորդությամբ բարձրացված խախտումների քանակ

Վարույթների գերակշիռ մեծամասնության դեպքում քննվել է մեկ կարգապահական խախտման հարց: Վարույթներից մեկով քննարկվել է դատավորին առաջադրված ենթադրյալ 3 խախտման հարց, մասնավորապես, դատավորի կողմից երեք քրեական գործերով իրեն պարտադիր վերապահված լիազորությունները չկատարելը և դատավարական ու նյութական իրավունքի նորմերի խախտումը[21]:

Մեկ այլ վարույթով Խորհրդին ներկայացված միջնորդությամբ բարձրացվել է 2 խախտման հարց,[22] այն է՝ դատավորը երկու դրվագով խախտել է նիստը հայերեն

[20] Տե՛ս ԲԴԽ-19-Ո-Կ-2 որոշումը:
[21] Տե՛ս ԲԴԽ-77-Ո-Կ-15 որոշումը
[22] Տե՛ս ԲԴԽ-83-Ո-Կ-17 որոշումը

վարելու օրենսդրական պահանջը, ավելին, իրեն վերագրել թարգմանչի գործառույթներ:

2.4. Դատավորների բացատրությունները

Դիտարկված բոլոր վարույթներով դատավորները ներկայացրել են բացատրություն՝ վիճարկելով խախտման փաստի առկայությունը, ինչի համար ներկայացրել են տարբեր հիմնավորումներ:

Օրինակ, մեկ գործով դատավորը նշել է, որ «*քաղաքացու 85 օր հոգեբուժական կազմակերպությունում մնալը որևէ պատճառահետևանքային կապի մեջ չէ իր կողմից դիմումը վերադարձնելու հետ: Դատավորը նշել է, որ վարույթում առկա նյութերը փաստում են, որ դեռևս 07.06.2024 թվականից առկա է եղել հոգեբուժական հանձնաժողովի եզրակացություն, համաձայն որի՝ Ս. Հ. ապաքինվել է: Այսինքն՝ բժշկական կազմակերպությունը պարտավոր էր անհապաղ դուրս գրել Ս. Հ.: Մինչդեռ դուրս է գրել միայն 30.08.2024 թվականին: Բժշկական կազմակերպությունը, լինելով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հասցեատեր, չի կատարել թիվ ԵԴ2/2506/02/24 գործով կայացված և օրինական ուժի մեջ մտած վճռով սահմանված պարտավորությունը, այն է՝ Ս. Հ.-ին անհապաղ 07.06.2024 թվականին դուրս չի գրել: Ստացվում է, որ կոնկրետ դեպքում բացակայել է վճիռը վերացնելու մասին դիմում ներկայացնելու անհրաժեշտությունը*[23]»:

Դատավարական ժամկետների խախտման հիմքով հարուցված վարույթով դատավորը բանավոր բացատրությամբ ներկայացրել է, որ «*իրեն մեղսագրվող արարքը՝ դատական ակտը օրենքով սահմանված ժամկետից ուշ հրապարակելը, արդեն քննվել է Բարձրագույն դատական խորհրդի կողմից այլ գործի շրջանակում, և այնտեղ արձանագրվել է, որ իր արարքում մեղավորություն չկա, քանի որ խախտումը տեղի է ունեցել իրենից անկախ՝ անձնական ծանր հանգամանքների և հոգեբանական ծանր վիճակի պայմաններում*[24]»:

Դատավորի կողմից շահերի բախման և ինքնաբացարկ չհայտնելու հիմքով հարուցված վարույթով վերջինս ներկայացրել է, որ «նախկինում դատավարական կողմի հետ աշխատանքային հարաբերություններ ունենալը չեն կարող հանդիսանալ ինքնաբացարկի հիմք… որևէ հարաբերություն չի ունեցել նշված ընկերության, աշխատողների կամ ներկայացուցիչների հետ, ինչպես նաև անձնական, ընկերական, տնտեսական կամ այլ շահեր չի ունեցել և չունի: Հայցվորի ներկայացուցչի՝ իր ազգանվան համընկնումը պատահականություն է և ինքնաբացարկի հիմք չի հանդիսանում, քանի որ վերջինս մերձավոր ազգական չէ[25]»:

---

[23] Տե՛ս ԲԴԽ-19-Ո-Կ-2 որոշումը:
[24] Տե՛ս ԲԴԽ-22-Ո-Կ-5 որոշումը:
[25] Տե՛ս ԲԴԽ-52-Ո-Կ-11 որոշումը:

Առանձին դեպքերում դատավորները ներկայացրել են, որ առաջնորդվել են գործող օրենսդրության կարգավորումներով և գործի փաստական հանգամանքներով և որևէ խախտում տեղի չի ունեցել[26]:

Բացատրության հիմքում ընկած ապացույց ներկայացվել են ինչպես գործի նյութերը, այնպես էլ կից ապացույցները: Այս նյութերը որպես ապացույց ներկայացվել և քննարկվել են նաև վարույթ հարուցող մարմնի կողմից:

Ի լրումն բացատրությունների՝ բոլոր գործերով դատավորները ներկայացրել են նաև առարկություններ և դրանցից բխող հարցեր ուղղել վարույթ հարուցող մարմնին:

2.5. Խորհրդի անդամների ինքնաբացարկի միջնորդությունները

Վարույթներից երեքով, որը հարուցված է եղել նույն դատավորի նկատմամբ՝ Խորհրդի անդամի կողմից ներկայացվել է ինքնաբացարկ: Այն բավարարվել է՝ դատավորի հետ ունեցած ընկերական կապերի հիմքով:[27]

Մեկ այլ վարույթով Խորհրդի անդամները ներկայացրել են ինքնաբացարկի միջնորդություններ, որոնք Խորհրդի կողմից բավարարվել է:[28] Միջնորդությունների հիմքում մեկ դեպքով հանդիսացել է Խորհրդի անդամի և դատավորի հետ ունեցած ընկերական կապը, իսկ մյուսով՝ Խորհրդի անդամը Վճռաբեկ դատարանում մասնակցել է վարույթում խնդրո առարկա գործի քննությանը:

Մեկ այլ վարույթով Խորհրդի անդամը ներկայացվել է ինքնաբացարկ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ նա վերաքննիչ դատարանում մասնակցել է տվյալ գործի քննությանը, որը բավարարվել է Խորհրդի կողմից:[29]

Մեկ այլ վարույթով Խորհրդի նախագահը նշել է, որ նույն դատարանի դատավոր է հանդիսանում նաև Խորհրդի անդամը, սակայն կողմերի կողմից բացարկ չի ներկայացվել: Նիստի ընթացքում բարձրաձայնվել է նաև, որ Խորհրդի անդամը երկու գործերով մասնակցել է դատական ակտերի կայացմանը, ինչից հետո վերջինս ներկայացրել է ինքնաբացարկի միջնորդություն՝ նշելով, որ մինչ այդ համապատասխան տեղեկությունները միջնորդությամբ ներառված չեն եղել: Խորհուրդը բավարարել է ներկայացված ինքնաբացարկի միջնորդությունը:[30]

3. ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

[26] Տե՛ս ԲԴԽ-34-Ո-Կ-7 որոշումը
[27] Տե՛ս ԲԴԽ-2-Ո-Կ-1, ԲԴԽ-21-Ո-Կ-4 և ԲԴԽ-62-Ո-Կ-14 որոշումները:
[28] Տե՛ս ԲԴԽ-34-Ո-Կ-7 որոշումը
[29] Տե՛ս ԲԴԽ-39-Ո-Կ-10 որոշումը
[30] Տե՛ս ԲԴԽ-77-Ո-Կ-15 որոշումը

Դատական օրենսգրքի կարգավորումների համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին Խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը՝

- Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ,
- Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու վերաբերյալ:

Ուսումնասիրված վարույթներից 6-ով Խորհուրդը որոշում է կայացրել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին, 6-ով վարույթ հարուցող մարմնի կողմից ներկայացված միջնորդությունը մերժվել է:

ԲԴԽ որոշումների արդյունքները



Դիտարկված վարույթներից երեքով Խորհրդում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության ընթացքում դատավորների լիազորությունների դադարեցվել են նախքան կարգապահական պատասխանատվության հարցի վերաբերյալ որոշման կայացումը:

Մասնավորապես՝

1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավորի լիազորությունները 10.11.2025 թվականից դադարել են, որով պայմանավորված կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությունը մերժվել է Բարձրագույն դատական Խորհրդի կողմից:[31]
2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավորի լիազորությունները 03.06.2025 թվականին դադարել է, որով պայմանավորված կարգապահական պատասխանատվության

[31] Տե՛ս ԲԴԽ-62-Ո-Կ-14 որոշումը

ենթարկելու վերաբերյալ միջնորդությունը մերժվել է Բարձրագույն դատական Խորհրդի կողմից:[32]

3. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի լիազորությունները 03.02.2025 թվականին դադարել է. որով պայմանավորված կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությունը կարճվել Բարձրագույն դատական Խորհրդի կողմից:[33]

Ուսումնասիրությունը արձանագրում է դեպքեր, որ դատավորները կարգապահական վարույթի հարուցման փուլում ներկայացնում են հրաժարականի դիմում, երբ կանխատեսելով իր նկատմամբ հնարավոր խիստ կարգապահական տույժի, այդ թվում՝ լիազորությունների դադարեցման կիրառման հնարավորությունը, դատավորը նախընտրում է հրաժարական ներկայացնել, ինչը պրակտիկայում կարող է ստեղծել կարգապահական պատասխանատվությունից խուսափելու հնարավորություն՝ առանց որևէ բացասական հետևանքների դատավորների համար:

Երկու վարույթներով ներգրավված դատավորների լիազորությունները Խորհրդի կողմից դադարեցվել են՝ պայմանավորված դատավորի՝ պաշտոնում պաշտոնավարմանը խոչընդոտող հիվանդությամբ կամ վիճակով, ինչով պայմանավորված կարգապահական վարույթի շրջանակներում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մի դեպքում մերժվել է[34], մյուս դեպքում՝ վարույթը կարճվել է[35]:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավորի վերաբերյալ կարգապահական պատասխանատվոթյան ենթարկելու մասին միջնորդությունը 05.05.2025 թվականին կասեցվել է, քանի որ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթը հարուցած Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը դիմել է Գլխավոր դատախազություն՝ քրեական վարույթ նախաձեռնելու նպատակով:

Առանձին վարույթներով, քննելով ներկայացված միջնորդությունը, Խորհուրդը որոշել է ներկայացված միջնորդությունը մերժել:

Մերժված վարույթներից մեկով ըստ վարույթը հարուցող մարմնի՝ Դատարանը սխալմամբ դասել է հայցվորի զբաղեցրած պաշտոնը քաղաքացիական ծառայության շարքի, մինչդեռ այն այդպիսին չէր, ինչը հաստատվել է Քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից: Բացի այդ, միջնորդությամբ բարձրացվել է այն հարցը, որ դատարանն անտեսել է գործով ներկայացված ապացույցները և չի

[32] Տե՛ս ԲԴԽ-34-Ո-Կ-3 որոշումը
[33] Տե՛ս ԲԴԽ-1-Ո-Կ-5 որոշումը
[34] Տե՛ս ԲԴԽ-34-Ո-Կ-3 որոշումը:
[35] Տե՛ս ԲԴԽ- 118-Ո-Կ-19 որոշումը:

իրականացրել գործի բազմակողմանի ու օբյեկտիվ քննություն, ինչն էապես խախտել է արդար դատաքննության սկզբունքները: Խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելը միջնորդության մերժման հիմքում դրվել է այն հանգամանքը, որ նյութական և/կամ դատավարական իրավունքի նորմերի խախտում չի արձանագրվել, բացի այդ, դատարանի որոշումը բողոքարկվել է վճռաբեկության կարգով և մնացել օրինական ուժի մեջ, որպիսի պարագայում կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավական հնարավորությունը բացակայել է[36]:

Մեկ այլ մերժված վարույթով քննարկման առարկա է դարձել այն հանգամանքը, որ Դատավորը չի հայտնել ինքնաբացարկ և քննել է գործը, որոշում կայացրել այն ընկերության օգտին, որի հետ նախկինում երկարատև աշխատանքային հարաբերություններ է ունեցել[37]: Խորհուրդը սույն գործով գտել է, որ քաղաքացիական գործով պատասխանողի և դատավորի միջև առկա հարաբերությունների առնչությամբ անկողմնակալ դիտորդի մոտ դատավորի անաչառության վերաբերյալ ողջամիտ կասկած հարուցող հանգամանք չէր կարող առկա լինել, հետևաբար դատավորի կողմից ինքնաբացարկ հայտնելու հիմք առկա չի եղել[38]:

Դատավարական ժամկետների՝ մասնավորապես գործով եզրափակիչ դատական ակտի հրապարակումը և այն դատավարական կողմերին տրամադրելը ուշացնելու հիմքով հարուցված վարույթով Խորհուրդը որոշել է միջնորդությունը մերժել: Մերժման հիմքում դրվել է ինչպես դատավորի կյանքում տեղի ունեցած և ծանր ապրումների հանգեցրած հանգամանքները, այնպես էլ դրանց բացառիկությունը, ինչով պայմանավորված բացակայել է նաև մեղքի հանգամանքը[39]:

Խորհրդի կողմից մերժված մեկ այլ վարույթի հարուցման հիմքում կրկին ընկած է եղել դատավորի կողմից դատավարական ժամկետների խախտման հանգամանքը:[40] Ըստ վարույթ հարուցող մարմնի՝ դատավորը թույլ է տվել դատավարական ժամկետի խախտում՝ գործը վարույթ ընդունելու որոշումը կողմերին ուղարկել է մեկ տարի ինը ամիս ուշ: Սույն դեպքում Խորհուրդը գտել է, որ դատավորի կողմից ձեռնարկվել են գործի քննությանն ուղղված դատավարական գործողություններով նշանակված դատական նիստերի մեծ մասը կայացել են, որոնց ընթացքում լուծվել են մի շարք հարցեր, և չեն կայացել նիստերից միայն երկուսը: Խորհուրդը հավելել է նաև, որ տվյալ պարագայում ապացույցների բավարար համակցությամբ չի հիմնավորվել դատավորի կողմից գործի քննությունը ողջամիտ ժամկետում չիրականացնելու փաստը, ինչը բացառում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելը: Ինչ վերաբերում է 18.10.2023 և 11.04.2024 դատական նիստերին՝ Խորհուրդը գտել է, որ

[36] Տե՛ս ԲԴԽ-34-Ո-Կ-7 որոշումը:
[37] Տե՛ս ԲԴԽ-52-Ո-Կ-11 որոշումը:
[38] Տե՛ս ԲԴԽ-52-Ո-Կ-11 որոշումը:
[39] Տե՛ս ԲԴԽ-22-Ո-Կ-5 որոշումը:
[40] Տե՛ս ԲԴԽ-21-Ո-Կ-4 որոշումը:

թեև արձանագրված վարքագիծը ձևականորեն պարունակում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նորմերի խախտումներ, սակայն 18.10.2023 և 11.04.2024 դատական նիստերը չեն կայացել կողմերի ծանուցման հետ չկապված պատճառներով՝ մասնավորապես դատավորի՝ ուսուցման դասընթացներին մասնակցության և արձակուրդում գտնվելու հետևանքով: Նշվել է նաև, որ գործի քննությունը շարունակվել է, հաջորդող մի շարք նիստեր կայացել են, և կողմերը, ըստ էության, տեղյակ են եղել գործի ընթացքից: Այդ հիմքով խորհուրդը եզրակացրել է, որ նշված խախտումները չեն հանգեցրել գործին մասնակցող անձանց իրավունքների էական սահմանափակման և իրենց նվազ կարևորության պատճառով չեն հեղինակազրկում դատական իշխանությունը՝ կիրառելով Օրենսգրքի 142-րդ հոդվածի 2-րդ մասը:

4. ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎԱԾ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Դատավորների կարգապահական պատասխանատվության վարույթների՝ վերջին տարիների մշտադիտարկումը վեր է հանել կարգապահական տույժի տեսակի ընտրության հետ կապված շարունակական բնույթ կրող խնդիրներ: Մասնավորապես, խոսքը վերաբերում է ինչպես յուրաքանչյուր գործով կոնկրետ տույժի տեսակի ընտրության հիմնավորվածությանը, այնպես էլ համաչափությանը:

Հերթական մշտադիտարկումը փաստում է, որ այս խնդիրը դեռևս շարունակում է արդիական մնալ:

Այսպես, դիտարկված վարույթներից 6-ով դատավորները ենթարկվել են կարգապահական պատասխանատվության: Խորհրդի կողմից ընտրվել են հետևյալ տույժի տեսակները՝

- 2 գործով՝ խիստ նկատողություն
- 2 գործով՝ նկատողություն
- 2 գործով՝ նախազգուշացում



2023թ. վարույթների քննության արդյունքներովէ Խորհրդի կողմից 6 վարույթով կայացվել է մերժման որոշում, 12 վարույթով դատավորները ենթարկվել են կարգապահական պատասխանատվության՝ 2 դեպքում դատավորներին հայտարարվել է նախազգուշացում, 5 դեպքում՝ նկատողություն, իսկ ևս 5 վարույթով դատավորների լիազորությունները դադարեցվել են՝ էական կարգապահական խախտման հիմքով: 2024թ վարույթների արդյունքներով՝ 5 վարույթով կայացվել է մերժման որոշում, 11 վարույթներով դատավորները ենթարկվել են կարգապահական պատասխանատվության, ըստ որում՝ 1 դեպքում դատավորին հայտարարվել է նախազգուշացում, 4 դեպքում՝ նկատողություն, 3 դեպքում՝ խիստ նկատողություն, իսկ ևս 3 վարույթով դատավորների լիազորությունները դադարեցվել են՝ էական կարգապահական խախտման հիմքով:

4.1. Նախազգուշացում կարգապահական տույժ

Դիտարկված վարույթներից երկուսով Խորհրդի կողմից դատավորներին հայտարարվել է նախազգուշացում:

Վարույթներից մեկով դատավորը, չնայած սահմանված ժամկետում արձակել է կարգադրություն և միջոցներ ձեռնարկել դատավճռի կատարումն ապահովելու ուղղությամբ, սակայն բավարար ուշադրություն չի դարձրել իր կողմից կայացված դատավճռի ի կատար ածումն ապահովելու համար սահմանված իր գործառույթները ամբողջական կատարելուն, պարտականությունները պատշաճ չի կատարել, ինչի արդյունքում դատապարտյալը սահմանված ժամկետից առնվազն 2 ամիս ավել գտնվել է անազատության մեջ: Ինչպես քննարկված նախորդ դեպքերում, սույն վարույթով կրկին խախտումը որակվել է կոպիտ անփութությամբ կատարված[41]:

[41] Տե՛ս ԲԴԽ-39-Ո-Կ-10 որոշումը:

Անդրադառնալով տույժի ընտրությանը, Խորհուրդը նշել է, որ տույժ կիրառելիս հաշվի է առնում խախտման բնույթը և հետևանքները, դատավորի անձը, առկա տույժերը: Այս հանգամանքները, սակայն, չեն քննարկվել, որևէ մեկնաբանություն չի ներկայացվել: Խորհրդի կողմից միայն նշվել է, որ դատավորը համարվում է կարգապահական տույժ չունեցող:

Խորհուրդը անդրադարձել է նաև տույժի համաչափության սկզբունքին, սակայն այն գործի հանգամանքների համատեքստում կրկին չի քննարկել: Հղում կատարելով Դատական օրենսգրքի առանձին հոդվածների՝ Խորհուրդը որոշել է դատավորին հայտարարել նախազգուշացում:

Երկրորդ վարույթի հարուցման հիմքում եղել է դատավորի կողմից դատական նիստի ընթացքում կողմի հետ ռուսերեն լեզվով հաղորդակցությունը, թարգմանության մասով լրացումներ կատարելն ու կողմին հավաստիացումը, որ սխալ թարգմանության դեպքում ինքը կուղղի: Դատավորը նիստի ընթացքում ռուսերեն լեզվով տրամադրել է նաև այլ պարզաբանումներ[42]:

Խորհուրդը սույն վարույթով կրկին գտել է, որ դատավորն իրեն վերագրվող խախտումը թույլ է տվել կոպիտ անփութությամբ, չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել: Խորհուրդը վկայակոչել է դատավորի կողմից թույլ տրված կարգապահական խախտման նկատմամբ հոգեբանական վերաբերմունքը և բացատրությամբ ներկայացված տեղեկությունները, ինչպես նաև վարույթ հարուցած մարմնի կողմից խախտումը դիտավորությամբ կատարելու վերաբերյալ ապացույցներ չներկայացնելու հանգամանքը, ինչով պայմանավորված մեղքի ձևին տվել է նման որակում: Խորհուրդը սակայն չի մեկնաբանել, թե ինչպես է գնահատել դատավորի հոգեբանական վերաբերմունքը և կոնկրետ որ տեղեկություններն են հիմք ընդունվել մեղքի որակման համար:

Անդրադառնալով տույժի տեսակին՝ Խորհուրդը նշել է, որ հաշվի է առնում խախտման բնույթը և հետևանքները, դատավորի անձը, առկա տույժերը և ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Ըստ այդմ, Խորհուրդը հաշվի է առել, որ դատավորը կարգապահական տույժ չի ունեցել: Նշվել է նաև այն, որ դատավորի կողմից թույլ տված խախտումը նյութականացված կոնկրետ հետևանք չի առաջացրել: Այս վարույթով նույնպես դատավորի նկատմամբ հայտարարվել է նախազգուշացում:

4.2. Նկատողություն կարգապահական տույժ

[42] Տե՛ս ԲԴԽ-83-Ո-Կ-17 որոշումը:

Խորհրդի կողմից նկատողություն կարգապահական տույժի տեսակը ևս հայտարարվել է երկու վարույթով:

Առաջին վարույթը, որի շրջանակներում Խորհուրդը ընտրել է նկատողություն կարգապահական տույժի տեսակը, հարուցված է եղել «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի կողմից ներկայացված հաղորդման հիման վրա: Ըստ հարուցված վարույթի՝ հոգեկան առողջության կենտրոնում գտնվող անձի վերաբերյալ ներկայացվել է դիմում՝ ոչ հոժարակամ հոսպիտալացման ենթարկելու վերաբերյալ դատարանի վճիռը վերացնելու պահանջի մասին: Դիմում ներկայացվել է մի քանի անգամ: Սակայն այդ դիմումները վերադարձվել են միևնույն պատճառաբանությամբ, որ վճիռը չի կայացրել այն դատարանը, որին ներկայացվել է դիմումը: Արդյունքում, անձը, լինելով բուժված, տևական ժամանակ գտնվել է հոգեկան առողջության կենտրոնում և ստացել համապատասխան բուժում[43]: Խորհուրդը որոշմամբ արձանագրել է, որ դատավորը, չունենալով հոգեբուժական կազմակերպության կողմից ներկայացված՝ անձին ոչ հոժարակամ հոսպիտալացման ենթարկելու վերաբերյալ վճիռը վերացնելու դիմումը վերադարձնելու օրենսդրական հիմք, այնուամենայնիվ մի քանի անգամ վարույթ չի ընդունել և ձևական նկատառումներով վերադարձրել է դիմումները՝ սահմանափակելով անձի դատարան դիմելու իրավունքը, ինչը հանգեցրել է ինչպես արդար դատաքննության, այնպես էլ անձնական ազատության իրավունքների խախտմանը: Ըստ Խորհրդի որոշման՝ դատավորը խախտումները կատարել է կոպիտ անփութությամբ:

Անդրադառնալով տույժի հարցին՝ Խորհուրդը նշել է, որ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Ըստ Խորհրդի՝ տույժ կիրառելիս հաշվի է առնվում խախտման բնույթը, և հետևանքները, դիտավորությունը կամ կոպիտ անփութությունը, դատավորի անձը, առկա տույժերը և ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Այս հանգամանքները, սակայն, հավելյալ մեկնաբանության և վերլուծության չեն ենթարկվել, խախտմամբ վրա հասած հետևանքները, այդ թվում՝ անձի անազատության մեջ գտնվելու ժամանակն ու համապատասխան բժշկական միջամտությունները, նույնպես մանրամասն չեն վերլուծվել՝ հատկապես տույժի ընտրության համատեքստում:

Խորհուրդը այնուհետև արձանագրել է, որ հարցի քննության պահին դատավորը կարգապահական տույժ չի ունեցել: Հաշվի առնելով ներկայացված բոլոր հանգամանքները, Խորհուրդը որոշել է դատավորին հայտարարել նկատողություն:

Այս գործի շրջանակներում առանձնակի ուշադրության արժանի է դատավորի կողմից թույլ տված խախտման բնույթն ու հանգամանքները, և այդ համատեքստում Խորհրդի կողմից ընտրված կարգապահական տույժի տեսակը: Հարցը առավել կարևոր է դառնում հատկապես, երբ հարուցված վարույթով խախտումը, դրա հետևանքներն

[43] Տե՛ս ԲԴԽ-19-Ո-Կ-2 որոշումը

ու կիրառված տույժի տեսակը համեմատվում է վերը ներկայացված վարույթների հետ, որի պարագայում Խորհրդի կողմից հայտարարվել է խիստ նկատողություն տույժի տեսակը: Հատկանշական է, որ սույն վարույթով Խորհրդի երկու դատավոր անդամները ներկայացրել են հատուկ կարծիք՝ համաձայն չլինելով կայացված որոշմամբ ընտրված տույժի տեսակի հետ և գտել, որ դատավորի լիազորությունները պետք էր դադարեցնել էական կարգապահական խախտման հիմքով:

Խորհրդի կողմից նկատողություն հայտարարվել է ևս մեկ վարույթով[44]: Վարույթի հիմքում ընկած է եղել այն հանգամանքը, որ դատավորը չի պահպանել մեղադրյալի հարցաքննության քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված պահանջները, չի բացատրել իրավունքներն ու պարտականությունները, ներառյալ՝ լռություն պահպանելու իրավունքը: Ավելին, տվյալ վարույթով դատավորը իրավունքները և պարտականությունները չպարզաբանելու պայմաններում մեղադրյալի կողմից տրված ցուցմունքների հիման վրա կատարվել են այլ դատավարական գործողություններ: Այս խախտումները ևս Խորհուրդը որակել է կոպիտ անփութությամբ կատարված: Խորհուրդը արարքի որակման հիմքում դրել է նաև դատավորի բացատրությունը առ այն, որ վերջինս մեղադրյալի իրավունքներն ու պարտականությունները չբացատրելը ներկայացրել է որպես գործող և ուժը կորցրած վերաբերելի դատավարական իրավակարգավորումների շփոթման արդյունք, ինչով պայմանավորված Խորհուրդը նշել է, որ դատավորն իրեն վերագրվող դատավարական իրավունքի նորմի խախտումը թույլ է տվել կոպիտ անփութությամբ, քանի որ չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրավիճակում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել:

Անդրադառնալով տույժի հարցին, Խորհուրդը նշել է, որ կարգապահական պատասխանատվության հարցի քննության պահին դատավորը չի ունեցել կարգապահական տույժ: Այնուհետ հղում է կատարվել Դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի, 142-րդ, 149-րդ, 154-155-րդ հոդվածներին և որոշ դատավորին հայտարարել նկատողություն:

Տույժի ընտրության հարցում Խորհրդի կողմից որևէ այլ մեկնաբանություն և վերլուծություն չի ներկայացվել: Խորհրդի կողմից քննարկման առարկա չի դարձել նաև դատավորի թույլ տված խախտման հետևանքների հարցը, նման արարքի ազդեցությունը հանրության վստահության և դատական իշխանության հեղինակության համատեքստում:

4.3. Խիստ նկատողություն կարգապահական տույժ

[44] Տե՛ս ԲԴԽ-34-Ո-Կ-9 որոշումը

Խիստ նկատողություն կարգապահական պատասխանատվության տեսակը մեկ դեպքում ընտրվել է մակագրված գործով դատավորի կողմից շուրջ 2 տարի 5 ամիս որևէ դատավարական գործողություն չկատարելու հիմքով հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում[45]: Տվյալ գործով Խորհուրդը գտել է, որ դատավորի կողմից թույլ տրված խախտումը կատարվել է կոպիտ անփութությամբ, քանի որ դատավորը չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել:

Հղում կատարելով Դատական օրենսգրքի 94-րդ, 142-րդ, 149-րդ, 154-րդ և 155-րդ հոդվածների կարգավորումներին՝ Խորհուրդը որոշել է դատավորին հայտարարել խիստ նկատողություն տույժի տեսակը:

Տույժի ընտրության հարցում սակայն որևէ այլ հիմնավորում և բացատրություն չի ներկայացվել, չի մեկնաբանվել նաև կոնկրետ տվյալ տեսակի ընտրությունը՝ համաչափության սկզբունքի լույսի ներքո:

Հաջորդ վարույթը, որի շրջանակներում Խորհուրդը կրկին ընտրել է խիստ նկատողություն տույժի տեսակը, եղել է դատավորի կողմից դատավարական և նյութական իրավունքի իմպերատիվ նորմերի կոպիտ խախտումների հիմքով հարուցված վարույթը, որի հիմքում ընկած է եղել դատավորի կողմից երեք քրեական գործերով իրեն պարտադիր վերապահված լիազորությունները չկիրառելը կամ սխալ կիրառելը, ինչը հանգեցրել է դատական վարույթի օրինական ընթացքի խաթարմանը և հեղինակազրկել դատական իշխանությունը[46]: Մասնավորապես, դատավորը քրեական գործով անձի նկատմամբ սահմանել է փորձաշրջան, սակայն որևէ պարտականություն չի սահմանել, ինչը ըստ Խորհրդի, խախտել է քրեական օրենսգրքի պահանջները, ավելին, նույն դատավորը մեկ այլ դեպքում կիրառել է համակցված խափանման միջոցներ՝ կրկին խախտելով քրեական օրենսդրության պահանջները:

Խորհուրդը գտել է, որ դատավորի կողմից թույլ տրված նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկներով և Խորհրդի գնահատմամբ իրենց ամբողջության մեջ դատավորի ոչ իրավաչափ գործողությունները հեղինակազրկել են դատական իշխանությունը՝ նվազեցնելով դատական իշխանության նկատմամբ հանրության վստահությունը և վնասելով դատավորի բարձր պաշտոնի հանրային ընկալումը:

Խորհուրդը այս դեպքում ևս գտել է, որ դատավորը խախտումը կատարել է կոպիտ անփութությամբ, չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում կարող էր և պարտավոր էր դա անել:

---

[45] Տե՛ս ԲԴԽ-2-Ո-Կ-1 որոշումը

[46] Տե՛ս ԲԴԽ-77-Ո-Կ-15 որոշումը

Տվյալ դեպքում տույժի տեսակը ընտրելիս Խորհուրդը նշել է, որ դատավորի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը, ինչպես նաև, որ տույժ կիրառելիս Խորհուրդը հաշվի է առնում խախտման բնույթը և հետևանքները, դատավորի անձը, առկա տույժերը և ուշադրության արժանի այլ հանգամանքները: Այս դեպքում Խորհուրդը հաշվի է առել, որ կարգապահական պատասխանատվության հարցի քննության պահին դատավորը չի ունեցել կարգապահական տույժ: Տույժի համաչափության տեսանկյունից՝ Խորհուրդը էական է համարել գործի փաստերն ու խախտումների բնույթը, մարդու իրավունքների խախտման տեսանկյունից՝ հետևանքների փաստացի բացակայությունը, ինչից ելնելով Խորհուրդը որոշել է դատավորին նշանակել խիստ նկատողություն:

Ի տարբերություն վերը ներկայացված առաջին գործի, երկրորդ դեպքում Խորհուրդը տույժի ընտրության հարցում ավելի լայն մեկնաբանություն է ներկայացրել, նշվել է նաև այն հանգամանքը, որ դատավորը կարգապահական տույժ չի ունեցել և խախտման արդյունքում փաստացի հետևանք չի եղել:

Երկու վարույթների և կայացված որոշումների հիմքում ընկած վերլուծության համեմատությունը ցույց է տալիս, որ առաջին դեպքում Խորհուրդը որպես խախտման հետևանք ներկայացրել է այն, որ դատավորի կողմից շուրջ 2 տարի 5 ամիս անհրաժեշտ դատավարական գործողությունների չձեռնարկելու արդյունքում Ա. Ն. առնվազն տևական ժամանակ զրկվել է օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա միջին աշխատավարձի չափով հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար, ինչպես նաև հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգման անհնարինության դեպքում՝ միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով հատուցում ստանալու իրավունքից: Երկրորդ դեպքում արձանագրվել է խախտման հետևանքի բացակայություն:

Երկու դեպքում էլ, սակայն, Խորհրդի կողմից հայտարարվել է խիստ նկատողություն պատժատեսակը, մեկ դեպքում՝ արձանագրելով խախտման հետևանքները, մյուս դեպքում՝ արձանագրելով ինչպես հետևանքի բացակայությունը, այնպես էլ դատավորի մոտ նախկինում տույժի բացակայությունը: Բացի այդ, որոշումներով համանման վերլուծություն և տույժի ընտրության հիմքում ընկած բոլոր հանգամանքների ուսումնասիրություն չի կատարվել /օրինակ՝ կարգապահական տույժի առկայությունը, որը հիշատակվել է մեկ դեպքում/:

Այսպիսով, հետազոտությունն արձանագրում է Խորհրդի կողմից տույժի ընտրության և համաչափություն հիմնավորման խնդիր: Տարբեր ծանրության խախտումների պարագայում Խորհրդի կողմից կիրառվել են նույն կարգապահական տույժերը՝ առանց բավարար հիմնավորման: Որոշ դեպքերում ներկայացվել են համաչափության սկզբունքին վերաբերող ընդհանուր ձևակերպումներ, սակայն դրանք չեն կիրառվել գործի կոնկրետ հանգամանքների հաշվի առմամբ:

Ուսումնասիրությունը նաև ցույց է տալիս, որ խախտումների հետևանքների գնահատումը և դրանց ազդեցությունը տույժի ընտրության վրա հաճախ չեն ենթարկվում համակողմանի վերլուծության: Ինչպես երևում է վերը ներկայացված գործերից, կան դեպքեր, երբ կարգապահական խախտումն առաջացրել են ծանր հետևանքներ և անձանց իրավունքների նկատմամբ էական միջամտություններ և խախտումներ, սակայն կիրառված տույժը համեմատաբար մեղմ է եղել, և դրա ընտրությունը բավարար կերպով չի հիմնավորվել: Միևնույն ժամանակ, որոշ այլ դեպքերում, որտեղ հետևանքներ չեն արձանագրվել, կիրառվել են համեմատաբար ավելի խիստ տույժեր՝ առանց նման տարբերության բավարար հիմնավորման: Ընդհանուր առմամբ, տույժի ընտրության հիմքում ընկած հանգամանքների ամբողջական գնահատում հաճախ չի իրականացվում:

Թեպետ Խորհրդի որոշումներում նշվում է, որ հաշվի են առնվում խախտման բնույթը և հետևանքները, մեղքի ձևը, դատավորի անձը, նախկին կարգապահական տույժերի առկայությունը և այլ հանգամանքներ, իրականում այդ գործոնները հաճախ չեն քննարկվում կամ չեն ենթարկվում խորքային վերլուծության: Արդյունքում որոշումների միջև առաջանում են մոտեցումների անհամապատասխանություններ: Բացի այդ, մեղքի ձևի՝ հատկապես կոպիտ անփութության գնահատումը հաճախ իրականացվում է ընդհանուր ձևակերպումներով, առանց այն հանգամանքների մանրամասն ներկայացման, որոնք հիմք են հանդիսացել նման գնահատականի համար:

5. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ

Ներպետական օրենսդրությունը Խորհրդի անդամներին հնարավորություն է տալիս հատուկ կարծիք ներկայացնել Խորհրդի՝ որպես դատարանի ընդունած որոշման պատճառաբանական կամ եզրափակիչ մասի վերաբերյալ: Մասնավորապես, եթե Խորհրդի անդամն ունի հատուկ կարծիք, ապա այդ մասին նրա ստորագրությամբ նշում է արվում որոշման մեջ և հատուկ կարծիքը նրա ստորագրությամբ կցվում է որոշմանը[47]:

Դիտարկված վարույթներից 6-ով Խորհրդի անդամների կողմից ներկայացվել է հատուկ կարծիք: Արձանագրենք, որ հատուկ կարծիք մեծամասամբ ներկայացվել է Խորհրդի ոչ դատավոր անդամների կողմից:

6 վարույթներից մեկով հատուկ կարծիքը ներկայացվել է դատավոր անդամ Մերի Համբարձումյանի կողմից, մեկով՝ Խորհրդի ոչ դատավոր չորս անդամների, երկուսով՝ Ե. Թումանյանցի և Կ. Թումանյանի կողմից, 2 վարույթով՝ Ե. Թումանյանցի կողմից:

[47] ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 94:

Ըստ էության, հատուկ կարծիք մեծամասամբ ներկայացվել է ոչ դատավոր անդամ Ե. Թումանյանցի կողմից:

Բոլոր դեպքերում ներկայացված հատուկ կարծիքը վերաբերել է կամ ընտրված կարգապահական պատասխանատվության տեսակին կամ քննվող գործով կարգապահական խախտման միջնորդությունը մերժելու հետ համաձայն չլինելուն:

Մասնավորապես, վարույթներից մեկով Խորհրդի չորս ոչ դատավոր անդամները հատուկ կարծիք են ներկայացրել՝ պնդելով, որ գործով առկա են դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու բավարար հիմքեր, մինչդեռ Խորհուրդը մերժել է ներկայացված միջնորդությունը՝ գտնելով, որ դատավորի կողմից որևէ վարքագծի կանոն և/կամ դատավարական նորմ չի խախտվել: Սույն կարծիքը ներկայացվել է Խորհրդի կողմից քննված գործով, որտեղ վարույթ հարուցող մարմինը միջնորդությամբ բարձրացրել է դատավորի վարույթում քննված գործով ինքնաբացարկ չհայտնելու հարցը, այն դեպքում, երբ դատավորը քննվող գործով կողմ հանդիսացող ընկերությունում շուրջ 10 տարի աշխատել է որպես իրավաբան:

Ներկայացված հատուկ կարծիքով Խորհրդի բոլոր ոչ դատավոր անդամները պնդել են, որ դատավորի վարույթում քննված գործով պատասխանող «Ֆլեշ» ՍՊԸ-ի և դատավորի միջև 2009-09.06.2020թթ ընկած ժամանակահատվածում գոյություն ունեցած ակնհայտորեն տևական աշխատանքային հարաբերությունների մասին գործին մասնակցող անձանց չտեղեկացնելու արդյունքում դատավորի կողմից թույլ է տրվել ի պաշտոնե գործելիս անաչառ լինելու և իր խոսքով կամ վարքագծով կողմնակալություն կամ խտրականություն դրսևորելու կամ ողջամիտ, անկողմնակալ դիտորդի մոտ նման տպավորություն ստեղծելու վարքագծի կանոնի խախտման ակնհայտ հատկանիշներ պարունակող արարք: Հետևաբար, դատավորի գործողություններում առկա էին կարգապահական խախտման հատկանիշներ և Խորհուրդը պարտավոր էր բավարարել Հանձնաժողովի միջնորդությունը և դատավորին ենթարկել կարգապահական պատասխանատվության[48]:

Դիտարկված մեկ այլ վարույթով[49] Խորհրդի ոչ դատավոր անդամներ Ե. Թումանյանցը և Կ.Թումանյանը անհամաձայնություն են հայտնել ընտրված կարգապահական տույժի տեսակի առնչությամբ՝ գտնելով, որ տվյալ խախտման պարագայում կիրառելի է էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում տույժի տեսակը: Խորհրդի ոչ դատավոր անդամները քննարկման առարկա են դարձրել կարգապահական տույժ նշանակելիս համաչափության սկզբունքի կարևորության հարցը և նշել, որ առավել նվազ ծանրության կարգապահական խախտման դեպքում պետք է կիրառվի առավել մեղմ կարգապահական պատասխանատվության միջոց և հակառակը: Տվյալ վարույթը

[48] Տե՛ս ԲԴԽ-52-Ո-Կ-11 որոշումը:
Վահագն Թորոսյան հատուկ կարծիք վերջնական (1).pdf - Google Drive
[49] Տե՛ս ԲԴԽ- 19-Ո-Կ-2 որոշումը:

վերաբերում էր դատավորի կողմից դատավարական նորմերի սխալ կիրառմանը, դրանց նույնաբովանդակ և անհիմն եզրահանգումներով վերադարձնելու, ինչի հետևանքով անձը շուրջ 85 օր գտնվել է հոգեկան առողջության կենտրոնում շարունակելով ստանալ բուժում: Ոչ դատավոր անդամները գտել են, որ դատավորի կողմից թույլ տված վարքագծի կանոնի խախտումն էական կարգապահական խախտում է, որը համատեղելի չէ դատավորի կարգավիճակի հետ և ակնհայտորեն պայմանավորված է դատական իշխանության անկախության և անաչառության ապահովման, դատական իշխանության հեղինակությունը բարձր պահելու, հանրության վստահության և իրավունքի գերակայության ապահովման հանրային շահերով[50]:

Խորհրդի նույն ոչ դատավոր անդամները համանման կարծիք ներկայացրել են մեկ այլ վարույթով ևս՝ գտնելով, որ դատավորի նկատմամբ պետք է ընտրվեր էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցման տույժի տեսակը[51]: Հատուկ կարծիքով ներկայացվել է, որ թիվ ԱՐԴ/0267/01/22, թիվ ԱՐԴ/0017/08/23 և թիվ ԱՐԴ/0018/06/23 գործերով համապատասխանաբար 05.05.2023, 09.03.2023 և 08.06.2023 թվականներին կայացված դատական ակտերում Դատավորի կողմից թույլ տրված նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումները հանգեցրել են Դատական օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ և 10-րդ կետերով սահմանված վարքագծի կանոնների խախտման, այն է՝ դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսևորելուց զերծ մնալու, ինքնաբացարկի հիմքերի բացակայության դեպքում օրենքով իր իրավասությանը վերապահված հարցերը քննելու և լուծելու, առանց արդարադատության շահերին վնասելու՝ ողջամիտ ժամկետում և նվազագույն դատական ծախսերի կատարմամբ օրենքով իր իրավասությանը վերապահված հարցերը քննելու և լուծելու, ինչպես նաև իր պատշաճ մասնագիտական պատրաստվածությունն ու հմտությունների շարունակական կատարելագործումն ապահովելու վերաբերյալ պահանջների խախտումների, որոնք ակնհայտորեն հանդիսանում են Դատավորի մասնագիտական պատրաստվածության ոչ բավարար մակարդակը բնութագրող խոսուն դրսևորումներ, և իրենց ակնհայտությամբ ստվերում են դատական իշխանության հեղինակությունը, նվազեցնում են դատական իշխանության նկատմամբ հանրության վստահությունը՝ վնասելով դատավորի բարձր պաշտոնի վերաբերյալ հանրային ընկալումը, հետագայում ևս չբացառելով նման իրավիճակների կրկնությունը, որպիսի հանգամանքներն իրենց համակցության մեջ

[50] 23.05.2025 Հատուկ կարծիք Աշոտ Հովաննիսյան.pdf - Google Drive
[51] Տե՛ս ԲԴԽ-77-Ո-Կ-15 որոշումը:

ստեղծում են Դատավորի արարքը, որպես էական կարգապահական խախտում գնահատելու բավարար հիմքեր[52]:

Խորհրդի ոչ դատավոր անդամ Ե.Թումանյանցը ևս 2 վարույթի շրջանակներում կայացված որոշումների առնչությամբ ներկայացրել է հատուկ կարծիք: Մեկ դեպքում հատուկ կարծիքով նշվել է, որ քննվող վարույթով[53] ԲԴԽ-ն պետք է բավարարեր Արդարադատության նախարարի ներկայացրած միջնորդությունը և դատավորներին ենթարկեր կարգապահական պատասխանատվության: Մասնավորապես, ըստ կարծիքի, Վերաքննիչ դատարանը գործի փաստական հանգամանքները ի պաշտոնե պարզելու (ex officio) սկզբունքի ուժով պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ վերաքննիչ բողոքի բոլոր հիմքերն ըստ էության քննության առարկա դարձնելու համար՝ անկախ այն հանգամանքից, թե վերաքննիչ բողոքում վկայակոչված այս կամ այն հիմքը վարչական դատարանում քննարկվել է, թե ոչ[54]: Տվյալ գործով անձը ներկայացրել է վերաքննիչ բողոք և բողոքում վարչական դատարանի կողմից 01.11.2022 թվականին կայացված վճռի բողոքարկման հիմքում չի դրել ծառայողական քննություն անցկացված չլինելու հանգամանքը, սակայն Վերաքննիչ վարչական դատարանը 20.04.2023 թ-ին կայացված որոշմամբ, չպահպանելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վերաքննիչ բողոքի քննության ընթացքում դրա սահմաններից դուրս չգալու դատավարական կանոնը, վարչական դատարանի դատական ակտի բեկանման և հայցի բավարարման հիմքում դրել է ծառայողական քննություն իրականացված չլինելու հանգամանքը, միաժամանակ կիրառելի նյութական իրավունքի չհիմնավորված ընտրության արդյունքում չի պարզել նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով նախատեսված՝ տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական պատճառներով կամ գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման հնարավորության հարցը, ինչն իր հերթին դատական ակտի կատարման փուլում հանգեցրել է դրա կատարման անհնարինության:

Մյուս վարույթով[55] Ե. Թումանյանցը կրկին համաձայն չի եղել Խորհրդի կողմից ընտրված կարգապահական տույժի տեսակի հետ և գտել, որ անհրաժեշտ է ավելի խիստ կարգապահական տույժ՝ նշելով, որ դատավորը, դատապարտյալի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված չհեռանալու մասին ստորագրության առկայության պայմաններում, դատավճիռն ի կատար ածելու նպատակով կարգադրությունը ուղարկելով ոստիկանություն, սակայն հետագայում՝ 15.06.2020 թվականին ստացված տեղեկությամբ դատապարտյալի 29.11.2019 թվականից հիմնարկում գտնվելու փաստը պարզելուց հետո, անհրաժեշտ գործողություններ չի

[52] Տե՛ս https://www.irtek.am/views/act.aspx?aid=131501
[53] Տե՛ս ԲԴԽ-34-Ո-Կ-7 որոշումը:
[54] Տե՛ս Կոլեգիալ_24.07.2025 (2) հրապարակված.pdf - Google Drive
[55] Տե՛ս ԲԴԽ-39-Ո-Կ-10 որոշումը:

ձեռնարկել, մասնավորապես՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարման մասին կարգադրությունը չի հասցեագրել քրեակատարողական հիմնարկին, ինչի արդյունքում թույլ է տվել դատավարական իրավունքի նորմի ակնհայտ խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է անձի ազատության իրավունքի անհարկի սահմանափակման՝ արտահայտված դատապարտյալի՝ սահմանված ժամկետից առնվազն 2 ամսից ավելի անազատության մեջ գտնվելով[56]:

Դիտարկված վարույթներից մեկով կայացված որոշման առնչությամբ հատուկ կարծիք ներկայացրել է Խորհրդի դատավոր անդամ Մ. Համբարձումյանը[57]: Հատուկ կարծիքով Խորհրդի անդամ Մ. Համբարձումյանը նշել է, որ Լիազոր մարմինը կարգապահական վարույթի ընթացքում հայտնաբերած վերոնշյալ ենթադրյալ խախտման մասով դուրս է եկել վարույթ հարուցելու մասին որոշմամբ Դատավորին վերագրված կարգապահական խախտումների՝ արարքների սահմաններից, ենթադրյալ նոր խախտման հայտնաբերման նոր առիթով կարգապահական վարույթ չի հարուցել եւ չի իրականացրել, որպիսի պայմաններում Օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված վարքագծի կանոնի՝ առանձին ենթադրյալ խախտման մասով առկա է Լիազոր մարմնի կողմից կարգապահական վարույթը կարճելու, իսկ Խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու հիմք: Ըստ այդմ Խորհրդի անդամը գտել է, որ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ» թիվ ԲԴԽ-21-Ո-Կ-4 որոշմամբ Խորհուրդը չպետք է ըստ էության քննարկման առարկա դարձներ վերոնշյալ ենթադրյալ կարգապահական խախտման առկայության կամ բացակայության հարցը:

Քննարկված վեց գործերով ներկայացված հատուկ կարծիքների ուսումնասիրությունը վկայում է, որ ԲԴԽ ներսում առկա է մասնագիտական և իրավական գնահատականների տարբերություն՝ ինչպես կարգապահական խախտման առկայության, այնպես էլ ընտրված կարգապահական տույժի համաչափության հարցերում: Վերջիններս կենտրոնացած են երեք հիմնական ուղղությունների շուրջ՝

1. Կարգապահական խախտման առկայության գնահատում,
2. Կիրառված տույժի տեսակի համաչափություն,
3. Կարգապահական վարույթի սահմանների և իրավական ընթացակարգերի պահպանություն:

Ինչպես ներկայացվեց, առանձին դեպքերում հատուկ կարծիքներում բարձրացվել է դատավորների կողմից անաչառության, ողջամիտ ժամկետների պահպանման,

[56] Տե՛ս https://drive.google.com/file/d/16f4G9D06Mdg1x4TY0Ns7gX7zFs1FNjhF/view
[57] Տե՛ս Հատուկ կարծիք.pdf - Google Drive

դատավարական նորմերի պատշաճ կիրառման և մասնագիտական բավարար պատրաստվածության հետ կապված խնդիրներ, որոնք, ըստ հատուկ կարծիք ներկայացրած ԲԴԽ անդամների, իրենց համակցությամբ կարող էին գնահատվել որպես էական կարգապահական խախտումներ՝ համատեղելի չլինելով դատավորի կարգավիճակի հետ և ազդելով դատական իշխանության հեղինակության ու հանրային վստահության վրա:

Դատավոր անդամի կողմից ներկայացված հատուկ կարծիքը շեշտադրել է ոչ թե արարքի նյութական կողմը, այլ կարգապահական վարույթի ընթացակարգային սահմանների պահպանումը՝ մատնանշելով, որ վարույթ հարուցող մարմինը դուրս է եկել իր որոշմամբ սահմանված շրջանակներից, ինչը կարող էր հանգեցնել դատավորի պաշտպանության իրավունքի խախտման և կարգապահական պատասխանատվության հարցի ոչ իրավաչափ քննարկման:

6. ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

ՀՀ Դատական օրենսգրքի 157-րդ հոդվածը սահմանում է ԲԴԽ կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշումների վերանայման հնարավորությունն ու կարգը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով: Մասնավորապես, նոր հանգամանքները հիմք են Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշման վերանայման համար, եթե՝

1) Սահմանադրական դատարանը կարգապահական վարույթով կիրառված օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, սակայն դրույթն իր մեկնաբանությամբ ճանաչելով Սահմանադրությանը համապատասխանող, միաժամանակ գտել է, որ այն անձի նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ.

2) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած դատական ակտով հիմնավորվել է դատավորի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը.

3) վարչական դատարանն ուժի մեջ մտնելու պահից անվավեր է ճանաչել այն նորմատիվ իրավական ակտը, որի կիրառմամբ կայացվել է տվյալ որոշումը:

Այն դեպքում, երբ Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ բացակայում են դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայելու հիմքերը, ապա

որոշում է ընդունում կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումը չվերանայելու վերաբերյալ:

Խորհրդի որոշումը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայելու հիմքերի առկայության դեպքում Բարձրագույն դատական խորհուրդը վերացնում է իր որոշումը և կայացնում է նոր որոշում:

Մշտադիտարկման իրականացման ժամանակահատվածում Խորհրդի կողմից վերանայման շրջանակներում քննվել են չորս վարույթներ, որոնց հիմքում մեկ գործով ընկած է եղել ՄԻԵԴ վճիռը, երկու գործերով Սահմանադրական դատարանի և մեկ գործով Վարչական դատարանի որոշումները:

1. Դատավոր Սուրեն Անտոնյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշման վերանայման վարույթ

Խորհրդի կողմից դատավոր Ս. Անտոնյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և լիազորությունները էական կարգապահական խախտման հիմքով դադարեցնելու վերաբերյալ որոշումը վերանայվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի հիման վրա[58]:

Դատավոր Անտոնյանի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման հիմք էր հանդիսացել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած վճիռը[59], որով հաստատվել էր նրա կողմից թույլ տրված արդար դատաքննության իրավունքի խախտումը: Հարուցված կարգապահական վարույթով Խորհրդի կողմից կայացվել էր էական կարգապահական խախտման հիմքով դատավորի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ որոշում:

Սուրեն Անտոնյանը դիմել էր Մարդու իրավունքների եվրոպական դատարան, որի վճռով արձանագրվել է արդար դատաքննության իրավունքի խախտում՝ Խորհրդի նախկին նախագահ Կ. Անդրեասյանի անաչառ դատարան չլինելու հիմքով[60]: Վճռի հիման վրա Ս. Անտոնյանը դիմել էր Խորհրդի նախկին որոշումը վերանայելու դիմումով:

Դատավորը վարույթի ընթացքում ներկայացրել է մի շարք միջնորդություններ: Մասնավորապես, միջնորդել է կարճել իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը՝ պատճառաբանելով, որ իր արարքում կարգապահական պատասխանատվության հիմքեր չկան, քանի որ ՄԻԵԴ-ի վճիռը ինքնին բավարար չէ կարգապահական պատասխանատվության համար, քանի որ անհրաժեշտ է ուսումնասիրել ներպետական օրենսդրությունը և տվյալ ժամանակահատվածի դատական պրակտիկան[61], իսկ տվյալ ժամանակահատվածում ձևավորված է եղել

[58] Տե՛ս https://www.arlis.am/hy/acts/206342
[59] Տե՛ս ԲԴԽ-52-Ո-Կ-13 որոշումը:
[60] ՄԻԵԴ, Սուրեն Անտոնյանն ընդդեմ Հայաստանի, դիմում 20140/23, վճիռ 23.01.2025թ. :
[61] Տե՛ս ԲԴԽ-52-Ո-Կ-13 որոշումը:

վճռաբեկ բողոքների ընդունելիության հարցերի հետ կապված այլ դատական պրակտիկա և որ իր կողմից կատարված գործողությունները պետք է դիտարկվեն այդ պրակտիկայի և այն ժամանակ գործող օրենսդրական կարգավորումների համատեքստում:

Վերանայման վարույթը քննվել և որոշում է կայացվել Խորհրդի նոր կազմով՝ ներառյալ նոր նախագահող դատավոր անդամի մասնակցությամբ: Նախկինում ընդունված որոշմանը և վերանայման վարույթին մասնակից անդամ հանդիսացել է միայն Խորհրդի ոչ դատավոր անդամ Ե. Թումանյանցը:

Դատավոր Անտոնյանը բացարկի միջնորդություն է ներկայացրել Ե. Թումանյանցին՝ նշելով, որ Խորհրդի անդամը նախկինում արդեն մասնակցել է նույն գործի վերաբերյալ որոշումների կայացմանը և կարող է լինել կողմնակալ: Խորհուրդը միջնորդության առնչությամբ նշել է, որ գործող օրենսդրական կարգավորումների շրջանակներում Խորհուրդը, հանդիսանալով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ իր որոշումները, այդ թվում՝ նոր հանգամանքի հիմքով վերանայելու բացառիկ լիազորություն ունեցող միակ սահմանադրական մարմինը, Խորհրդի անդամ Ե. Թումանյանցին այդ որոշման կայացմանը կողմ քվեարկած լինելու հիմքով հայտնված բացարկի միջնորդությունը չի բխում Խորհրդի՝ իր կողմից կայացված դատական ակտերը վերանայելու սահմանադրական օրենքի մակարդակում ամրագրում ստացած լիազորության էությունից:

Դատավորը միջնորդել է նաև մերժել ներկայացված միջնորդությունը՝ նշելով, որ առկա է Օրենսգրքի 142-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքը, որը կարգապահական վարույթը կարճելու կամ միջնորդությունը մերժելու հիմք է: Միաժամանակ, խնդրել է դիմել ՀՀ Սահմանադրական դատարան՝ համապատասխան օրենքի դրույթների սահմանադրականությունը վիճարկելու նպատակով, անհրաժեշտության դեպքում նաև կասեցնելով տվյալ կարգապահական վարույթը: Միջնորդությունը մերժվել է՝ պատճառաբանելով, որ վիճարկվող իրավական նորմերի սահմանադրականության հարցը արդեն իսկ լուծված է, ուստի նոր դիմումի կամ կասեցման անհրաժեշտություն չկա:

Վարույթը ժամկետները լրանալու հիմքով կարճելու կամ միջնորդությունը առանց քննության թողնելու պահանջը մերժվել է՝ նշելով, որ վարույթը հարուցվել և շարունակվում է օրենքով սահմանված կարգով, իսկ նոր հանգամանքի (ՄԻԵԴ վճռի) ի հայտ գալը ինքնին իրավաչափ հիմք է վերանայման կամ ընթացքի շարունակման համար:

Անդրադառնալով վարույթով առկա փաստերին՝ Խորհուրդը արձանագրել է, որ Դատարանն իր կողմից թույլ տրված դատավարական խախտումների հետ միաժամանակ, այն է առանց ժամկետի սահմանման վերադարձրած վճռաբեկ բողոքի և օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայության պայմաններում կրկին ներկայացված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելով վերաքննիչ դատարանի ակտ

բեկանելով թույլ է տվել նաև res judicata սկզբունքի, ինչպես նաև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի և թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում, ինչով պայմանավորված դատավորի կողմից թույլ տված նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներով դրսևորված արարքը պայմանավորված դատական իշխանության հեղինակազրկման, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահության նվազեցման, ինչպես նաև իրավունքի գերակայության սկզբունքի անտեսման հանգամանքներով հիմք են հանդիսանում այն որպես դատավորի կարգավիճակի հետ անհամատեղելի էական կարգապահական խախտում գնահատելու համար:

Խորհուրդը անդրադարձել է նաև ՄԻԵԴ խախտման հիմքով կարգապահական վարույթ հարուցելու ժամկետների հարցին և կրկին նշել, որ օրենքով նախատեսված դեպքերում կարգապահական վարույթ կարող է հարուցվել նաև մինչև օրենքն ուժի մեջ մտնելը կայացված՝ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ ՄԻԵԴ ակտերի ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված խախտումներով, եթե ՄԻԵԴ կայացրած ակտն ուժի մեջ մտնելուց հետո չի անցել 15 տարի:

Խորհուրդը կրկին եզրահանգել է, որ Դատավորի կողմից թույլ տրված նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումները կատարվել են կոպիտ անփութությամբ, քանի որ վերջինս չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել: Կոնվենցիայի 6-րդ և թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով երաշխավորած իրավունքների խախտումներ թույլ տալով՝ Դատավորն իր գործողություններում զերծ չի մնացել դատական իշխանությունը վարկաբեկող, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսևորելուց:

Նախարարի՝ միջնորդությունը մերժելու միջնորդությունը նույնպես մերժվել է, քանի որ Խորհուրդը գտել է, որ առկա է ՄԻԵԴ վճռով հաստատված խախտում, որի հիման վրա օրենքով նախատեսված կարգով կարող է իրականացվել կարգապահական պատասխանատվություն:[62]

Խորհուրդը վերանայման վարույթով կայացված որոշմամբ կրկին եզրահանգել է, որ դատավորի կողմից թույլ են տրվել էական կարգապահական խախտումներ, որոնք համատեղելի չեն դատավորի կարգավիճակի հետ և էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում կարգապահական տույժի կիրառումն ակնհայտորեն պայմանավորված է դատական իշխանության անկախության և անաչառության ապահովման, հեղինակությունը բարձր պահելու, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահության և իրավունքի գերակայության ապահովման հանրային շահով:

[62] Տե՛ս ԲԴԽ-52-Ո-Կ-13 որոշումը:

2. Դատավոր Արթուր Ստեփանյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշման վերանայման վարույթ[63]

Խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և լիազորությունները էական կարգապահական խախտման հիմքով դադարեցնելու վերաբերյալ որոշումը վերանայվել է ՀՀ Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա[64]:

Դատավոր Ստեփանյանի լիազորությունները էական կարգապահական խախտման հիմքով դադարեցվել էին մի շարք վարույթներով դատավարական ժամկետների խախտման հիմքով: Դատավորը Սահմանադրական դատարան ներկայացրած դիմումում բարձրացրել էր այն հարցը, որ դատավորի կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթի նիստին մասնակցել են Խորհրդի բոլոր 10 անդամները, սակայն դատավորի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ որոշման քվեարկության ընթացքում հաշվի են առնվել միայն 8 անդամների ձայները, որպիսի պայմաններում դատավորի լիազորությունները դադարեցվել են ոչ թե պահանջվող՝ նիստին մասնակցող Խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, որն առնվազն 6 ձայն է, այլ՝ 5 կողմ ձայնով:

Քննելով դիմումը՝ Սահմանադրական դատարանը գտել է, որ Դատական օրենսգրքի կարգավորումը, որի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Խորհրդի որոշման ընդունման համար սահմանված է ձայների այնպիսի շեմ, ինչպիսին է Խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը, Խորհրդի կողմից դատավորի նկատմամբ էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում կարգապահական տույժի կիրառմամբ համապատասխան որոշման՝ Խորհրդի անդամների հինգ կողմ ձայներով ընդունման պայմաններում, հանգեցնում է Խորհրդի որոշման ժողովրդավարական լեգիտիմության բարձր գործակից չապահովելու առումով անձի՝ հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման, հետևաբար՝ համահունչ չէ Սահմանադրության 49-րդ հոդվածին՝ 75-րդ հոդվածի հետ համակցության մեջ[65]:

Հիմք ընդունելով Սահմանադրական դատարանի որոշումը՝ Դատավորը դիմել է Խորհրդին՝ խնդրելով վերանայել Խորհրդի որոշումը:

---

[63] Տե՛ս Բդխ-52-Ո-Կ-12 որոշումը:

[64] Սահմանադրական դատարան, Արթուր Ստեփանյանի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության Դատական Օրենսգիրք» Սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 6-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՍԴՈ-1780 որոշում, 22 ապրիլի 2025թ., https://www.arlis.am/hy/acts/206342:

[65] Նույն տեղում:

Վերանայման վարույթի ընթացքում Դատավոր Ստեփանյանը ներկայացրել է մի շարք միջնորդություններ: Մասնավորապես, նշվել է, որ կարգապահական վարույթ հարուցելու առիթ չի եղել, քանի որ հաղորդում ներկայացրած անձը չի ունեցել իրավական շահագրգռվածություն: Նրա կարծիքով՝ հաղորդումը կարող է հիմք հանդիսանալ վարույթի համար միայն այն դեպքում, երբ առկա է կոնկրետ անձի խախտված իրավունք, իսկ «ցանկացած անձի» կողմից հաղորդում ներկայացնելը կարող է նաև դիտվել որպես դատավորի անկախության վրա ազդելու փորձ[66]: Այս միջնորդությունը մերժվել է.Խորհուրդն արձանագրել է, որ գործը գտնվում է վերանայման ընթացակարգում և դեռ պետք է վերջնական գնահատման ենթարկվի, ուստի այդ փուլում նման եզրահանգում անել հնարավոր չէ:

Դատավորը նաև նշել է, որ իրեն վերագրվող խախտումները, ըստ էության, համընկնում են նախկինում քննված և արդեն գնահատված դեպքերի հետ, ինչի պայմաններում նույն արարքների համար կրկնակի կարգապահական պատասխանատվության ենթարկելը անթույլատրելի է: Նույն միջնորդությամբ դատավորը վիճարկել է նաև իրեն վերագրված ուշացումների չափերն ու հաշվարկման մեթոդաբանությունը՝ նշելով, որ որոշ տվյալներ սխալ են կամ չափազանցված, իսկ որոշ դեպքերում հրապարակման օրերը սխալ են նշվել: Դատավորը ուշացումները բացատրել է իր գերծանրաբեռնվածությամբ և ընդգծել, որ դրանք համակարգային բնույթ են կրել:

Ներկայացվել են այլ միջնորդություններ ևս, օրինակ՝

- Դատավորին պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժված համարելու մասին՝ բավարար քվեների բացակայության հիմքով,
- Խորհրդի որոշ անդամների բացարկ հայտնելու վերաբերյալ՝ բարձրացնելով այդ անդամների նախկին մասնակցության հարցը,
- վարույթը կարճելու կամ միջնորդությունն առանց քննության թողնելու՝ իր, որպես պատշաճ սուբյեկտ չլինելու հիմնավորմամբ,
- վարույթ հարուցելու ժամկետները լրացած լինելու հիմքով կարգապահական պատասխանատվության չենթարկելու վերաբերյալ,
- ինչպես նաև վարույթ հարուցած մարմնի հնարավոր կողմնակալության հիմքերով:

Խորհրդի անդամներին բացարկ հայտնելու միջնորդությունը մերժվել է այն հիմքով, որ Խորհուրդն այն մարմինն է, որը օրենքով լիազորված է վերանայել իր իսկ նախկին որոշումները, և այդ հիմքով անդամների մասնակցությունը չի կարող համարվել անաչառության խախտում կամ բացարկի հիմք: Բացի այդ, նշվել է, որ նման մոտեցումը կարող է գործնականում անհնար դարձնել Խորհրդի աշխատանքը, քանի որ կբացառի քվորումի ձևավորումը:

[66] Տե՛ս ԲԴԽ-52-Ո-Կ-12 որոշումը:

Ժամկետների լրանալու հիմքով միջնորդությունը մերժվել է: Ըստ Խորհրդի՝ նոր հանգամանքի ի հայտ գալու դեպքում վերանայման գործընթացն ունի իր հատուկ ընթացակարգը, և այն չի կարող դիտվել որպես արդեն ավարտված կամ ժամկետանց վարույթ:

Վարույթը կարճելու պահանջը (ներառյալ ենթադրյալ կողմնակալության վերաբերյալ փաստարկները) մերժվել է այն պատճառաբանությամբ, որ նախկին նախարարի կամ Խորհրդի ղեկավարության հնարավոր հարաբերությունների վերաբերյալ պնդումները չեն ազդում տվյալ վերանայման վարույթն օրինականության վրա: ԲԴԽ-ն նշել է, որ նոր հանգամանքի հիմքով վերանայումը դեռ ընթացքի մեջ է, և վերջնական իրավական գնահատականը կարող է տրվել միայն այդ վերանայման ավարտից հետո:

Վերանայման վարույթի շրջանակներում ուսումնասիրելով միջնորդությամբ ներկայացված փաստերը, Խորհուրդը գտել է, որ Դատավորը, ընդհանուր 79 քաղաքացիական գործերով դատական ակտ հրապարակելու և օրենքով սահմանված կարգով դրա օրինակը գործին մասնակցող անձանց ուղարկելու համար սահմանված դատավարական ժամկետները չպահպանելու արդյունքում, հաշվի առնելով նաև խախտումների տևական բնույթն ու քանակը՝ թույլ է տվել դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, որոնք հանգեցրել են առանց արդարադատության շահերին վնասելու՝ ողջամիտ ժամկետում և նվազագույն ծախսերի կատարմամբ առանց դատական իշխանությունը վարկաբեկող, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսևորելու իր իրավասությանը վերապահված գործերը քննելու և լուծելու վերաբերյալ դատավորի վարքագծի կանոնի խախտման, ինչով և միաժամանակ դատավորը զերծ չի մնացել դատական իշխանությունը վարկաբեկող, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսևորելուց: Խորհուրդը գտել է, որ խախտումները կատարվել են կոպիտ անփութությամբ, քանի որ դատավորը չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել:

Անդրադառնալով ՍԴ որոշմամբ սահմանված Խորհրդի 6 անդամների կողմ քվեարկության արդյունքում ընդունված չլինելու հիմքով մերժելու վերաբերյալ որոշումն ընդունված համարելու մասին միջնորդությանը՝ Խորհուրդը վկայակոչել է Սահմանադրական դատարանի մեկ այլ որոշում: Մասնավորապես, Խորհուրդը նշել է, որ Սահմանադրական դատարանը 29.07.2025 թ-ի ՍԴՈ-1791 որոշմամբ, անդրադառնալով նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայման առանձնահատկություններին արձանագրել է, որ «...ինչ վերաբերում է նոր հանգամանքների հիմքով դատական ակտի վերանայմանը, ապա այն վերանայող դատական ակտի բեկանումից հետո տեղի ունեցող ընթացակարգ է, որի ընթացքում միայն կարող է գնահատվել նաև հանգամանքի ազդեցությունը գործի ելքի վրա, ինչով

էլ պայմանավորված է վերանայվող դատական ակտի եզրափակիչ մասը փոփոխելու կամ չփոփոխելու անհրաժեշտությունը: Հաշվի առնելով այդ, Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման առկայությունը՝ որպես նոր հանգամանք, հիմք է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշման վերանայման վարույթ հարուցելու համար: Որպես այդ գործընթացին տրամաբանորեն հաջորդող կարգավորում՝ Օրենսգրքի 157-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված է, որ Խորհրդի որոշումը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայելու հիմքերի առկայության դեպքում Խորհուրդը վերացնում է իր որոշումը և կայացնում է նոր որոշումը:

Հենվելով հիշատակված որոշմամբ սահմանված կարգավորման վրա՝ Խորհուրդը գտել է, որ նոր հանգամանքի ազդեցությունը միջնորդության վերաբերյալ որոշման վրա՝ Խորհրդի փոփոխված կազմի մասնակցությամբ կարող է գնահատվել բացառապես 17.09.2025 թ-ի որոշման կայացմամբ մեկնարկած վերանայման ընթացակարգի արդյունքում կայացվող դատական ակտով, իսկ նման պայմաններում միջնորդությունը մերժելու մասին որոշումը չի կարող համարվել ընդունված:

Վերանայման շրջանակներում Դատավորը ի հավելումն նախորդիվ ներկայացված միջնորդությունների և բացատրությունների, բարձրացրել է նաև *ՄԻԵԴ Անտոնյանն ընդդեմ Հայաստանի* գործով կայացված վճռի հիմնավորումներն ու խնդրել իր դեմ հարուցված վարույթը կարճել: Խորհուրդը, անդրադառնալով միջնորդությանը, գտել է, որ այդ հիմքով դատավորի միջնորդությունը անհիմն է և ենթակա մերժման, քանի որ արդարադատության նախկին նախարար Գ.Մինասյանի կողմից 23.05.2024թ-ի որոշմամբ դատավոր Ա. Ստեփանյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությունը Խորհուրդ ներկայացված լինելը և այդ ժամանակահատվածում Կ. Անդրեասյանի Խորհրդի նախագահ հանդիսանալու հանգամանքները սույն վարույթի շրջանակներում առկա փաստերի գնահատման առումով որևէ նշանակություն ունենալ չեն կարող և ըստ այդմ՝ ազդել վարույթի հարուցման օրինականության վրա և վարույթի կարճման հիմք հանդիսանալ՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ քննարկվող վարույթի շրջանակներում Լիազոր մարմին հանդիսացող Արդարադատության նոր նախարարն ամբողջությամբ պնդել է միջնորդությունը:

Խորհուրդը հավելել է, որ դատավորը նախկինում Նախարար Գ. Մինասյանի և Խորհրդի նախագահ Կ. Անդրեասյանի միջև հնարավոր կողմնակալության մասին դիրքորոշում չի հայտնել:

Վերանայման շրջանակներում ուսումնասիրելով վարույթի հիմքում ընկած հանգամանքները, քննելով ներկայացված միջնորդություններն ու իրավական կարգավորումները՝ Խորհուրդը որոշել է վերանայման արդյունքում կայացնել նոր որոշում: Մասնավորապես, որոշել է Արդարադատության նախարարի միջնորդությունը բավարարել և դատավոր Ա. Ստեփանյանի լիազորությունները էական կարգապահական խախտման հիմքով դադարեցնել: Որոշումն ընդունվել է

Խորհրդի 9 անդամների կողմից: Ըստ էության, վերանայման արդյունքում Խորհուրդը կայացրել է համանման որոշում՝ ներկայացնելով նաև նախկինում կատարված հիմնավորումները:

3.Դատավոր Դավիթ Հարությունյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վերանայման վարույթ[67]

Վերանայված մեկ այլ վարույթի հարուցված է եղել այն հիմքով, որ Դատավորը լրագրողներին տված հարցազրույցի շրջանակներում իր արտահայտություններով խախտել է վարքագծի կանոնները՝ հրապարակայնորեն կասկածի տակ դնելով Խորհրդի անկախությունն ու անաչառությունը և որակելով դատավոր գործընկերների լիազորությունների դադարեցումը որպես անօրինական, ինչով վնասել է դատական իշխանության հեղինակությունն ու հանրային վստահությունը:

Դատավորը Խորհրդի որոշումը բողոքարկել է Սահմանադրական դատարան, որը ՍԴՈ-1729 որոշմամբ արձանագրել է Խորհրդում դատական վարույթի հրապարակայնության ու Դատավորի լսված լինելու իրավունքի խախտում: Մասնավորապես, դատաքննության հրապարակայնությունը արդար դատաքննության իրավունքի կարևոր բաղադրատարր է, իսկ դրա սահմանափակումը՝ ներառյալ դռնփակ դատական նիստի անցկացումը, հնարավոր է միայն Սահմանադրությամբ նախատեսված բացառիկ դեպքերում և պետք է պատշաճ հիմնավորված լինի: Միաժամանակ Սահմանադրական դատարանը շեշտել է, որ «դատական նիստերի դահլիճից հեռացում» դատական սանկցիայի կիրառումը չպետք է հանգեցնի անձի լսված լինելու իրավունքի չեզոքացման, և Խորհուրդը պարտավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները դատավորի դատավարական իրավունքների ապահովման համար[68]: Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա Դատավորը դիմել էր Խորհրդին վերանայելու իր որոշումը: Գրավոր ընթացակարգով քննության ենթարկելով դիմումը, Խորհուրդը մերժել էր վերանայումը:

Դատավոր Հարությունյանը կրկին դիմել է Սահմանադրական դատարան, որի կողմից երկրորդ անգամ արձանագրվել են Դատավորի իրավունքների խախտումներ:

Մասնավորապես, Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1791 որոշմամբ արձանագրել է, որ որպես նոր հանգամանք՝ Բարձրագույն դատական խորհուրդը պարտավոր էր վերանայել իր որոշումը, այսինքն՝ վերանայման ըստ էության փուլում

[67] Տե՛ս ԲԴԽ-57-Ո-Կ-16 որոշումը:

[68] Սահմանադրական դատարան, Դավիթ Հարությունյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության Վարչական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի եվ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 6-րդ մասի՝ հաշվի առնելով նաեվ նշված դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունները, սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՍԴՈ-1729 որոշում, 21.05.2024թ. https://old.arlis.am/DocumentView.aspx?docID=193254 :

դա հայեցողական չէ, այլ պարտադիր լիազորություն է, և «իրավունք ունի» ձևակերպումը չի կարող մեկնաբանվել որպես չվերանայելու ազատ հայեցողություն, երբ առկա են օրենքով սահմանված հիմքերը[69]: Արդյունքում, Դատավորը կրկին դիմել է Բարձրագույն դատական խորհուրդ՝ պահանջելով վերանայել և վերացնել իր լիազորությունները կարգապահական խախտման հիմքով դադարեցնելու վերաբերյալ Խորհրդի 2023 թվականի որոշումը, նաև այն չվերանայելու վերաբերյալ 2024 թվականի որոշումը և իրեն վերականգնել դատավորի պաշտոնում: Այս դիմումի հիման վրա ԲԴԽ-ն վերացրել է իր նախկին որոշումները և նշանակել միջնորդության նոր քննություն: Վերանայման վարույթով Արդարադատության նախարարությունը, նախ, նշել է, որ հարգում է Սահմանադրական դատարանի դերակատարությունն ու որոշումների պարտադիր բնույթը և ձեռնպահ է մնում այդ որոշումների վերանայման հիմքերի վերաբերյալ որևէ դիրքորոշում հայտնելուց:

Դիմումի քննարկման ընթացքում Խորհրդի անդամ Արմենուհի Հարությունյանը հայտնել է ինքնաբացարկ՝ նշելով, որ տվյալ գործով նախկինում՝ որպես արդարադատության նախարարի պարտականությունները կատարող, ինքն է հարուցել կարգապահական վարույթը:

Վարույթով վերանայումը տեղի է ունեցել 22.12.2025 թվականից մինչև 04.03.2026 թվականը և կայացել են թվով 16 դատական նիստեր:

Դատավորը Խորհրդի գրեթե բոլոր անդամներին ներկայացրել է ինքնաբացարկի միջնորդություններ՝ նշելով, որ դատարանը պետք է լինի պատշաճ, պրոֆեսիոնալ, անկողմնակալ և անաչառ, ուստի Խորհրդից խնդրել է տրամադրել համապատասխան երաշխիքներ բացարկի ներկայացման համատեքստում: Խորհրդի անդամներին ինքնաբացարկ հայտնելու միջնորդությունների հիմքում հիմնականում դրվել են նախկին որոշումների կայացմանը մասնակցությունը, ենթադրյալ անձնական կամ ծառայողական կապերը, նախկին ղեկավարության ազդեցության տակ գտնվելու հանգամանքը, ինչպես նաև հնարավոր անաչառության և անկախության վերաբերյալ կասկածները:

Բացի այդ, դատավորի և նրա ներկայացուցչի կողմից ներկայացվել են հետևյալ միջնորդությունները՝

- Վարույթը առանց քննության թողնելու, մերժելու կամ կարճելու վերաբերյալ միջնորդություն՝ ԲԴԽ-ի անկախության և անաչառության վերաբերյալ կասկածներով պայմանավորված:
- Դատավորի նախկին պաշտոնում վերականգնելու կամ կարգապահական վարույթը մերժելու/կարճելու վերաբերյալ միջնորդություն:

[69] Սահմանադրական դատարան, Դավիթ Հարությունյանի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 157-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով, ՍԴՈ-1791 որոշում, 29.07.2025թ., https://www.arlis.am/hy/acts/210193 :

- Վարույթի քննությունը կասեցնելու և Սահմանադրական դատարան դիմելու միջնորդություն՝ կիրառվող իրավական նորմերի սահմանադրականությունը վիճարկելու նպատակով:
- Վկաներ ներգրավելու վերաբերյալ միջնորդություններ՝ այդ թվում Խորհրդի նախկին նախագահ Կարեն Անդրեասյանին և Արդարադատության նախկին նախարար Գրիգոր Մինասյանին:

Չնայած ներկայացված միջնորդություններին և դրանց հիմնավորումներին՝ միջնորդությունները չեն բավարարվել, իսկ Խորհրդի՝ նախկինում կայացված որոշումը չի փոխվել: Խորհուրդը վերանայման վարույթով կրկին գտել է, որ առկա է էական կարգապահական խախտում և կիրառել է դատավորի լիազորությունների դադարեցում կարգապահական տույժը:

4. *Դատավոր Սիմա Իսկանդարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշման վերանայման դիմումի քննություն*

Նախկինում հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում Խորհուրդը որոշել էր դատավորի լիազորությունները դադարեցնել էական կարգապահական խախտման հիմքով դատավորի վարքագծի կանոնները խախտելու հիմքով ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության աշխատակիցների հասցեին վիրավորական արտահայտություններ հնչեցնելու համար:

Միջադեպի կապակցությամբ ոստիկանությունը Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով դատավորի դեմ ներկայացրել է բողոք:

ՀՀ Վարչական դատարանը, սակայն, մերժել է ՀՀ ոստիկանության՝ դատավոր Ս. Իսկանդարյանին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի մասին հայցը, ի թիվս այլնի, նշելով, որ «գործում առկա չէ որևէ ապացույց, որով կհաստատվեր, որ Ս. Իսկանդարյանը ոստիկանական ծառայողի կողմից հենց հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման պարտականություններ իրականացնելու հետ պայմանավորված է վերջինիս նկատմամբ օգտագործել նշված արտահայտությունը »: Վարչական դատարանի կողմից քննարկվել է նաև ապացույցների օգտագործման թույլատրելիության հարց, ինչով պայմանավորված դատավորը վարչական պատասխանատվության չի ենթարկվել:

Վարչական դատարանի նշված որոշման հիման վրա դատավոր Ս. Իսկանդարյանը դիմել է Խորհրդին՝ որոշման վերանայման դիմումով: Խորհուրդը գտել է, որ բացակայում է Դիմումի քննությունը դատական նիստում իրականացնելու անհրաժեշտությունը և Դիմումի քննությունը նպատակահարմար է իրականացնել գրավոր ընթացակարգով:

Դիմումի քննության ընթացքում, վկայակոչելով նախկինում կայացրած իր որոշումը՝ Խորհուրդը նախ արձանագրել է, որ եթե նույնիսկ ապացույցը ձեռք է բերվել օրենքի խախտմամբ, ապա միևնույն է, կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար հիմք հանդիսացող վարքագիծ թույլ տրված լինելու փաստը շարունակում է գոյություն ունենալ: Ըստ Խորհրդի՝ Դիմողի կողմից որպես նոր երևան եկած ինքնուրույն հանգամանք վկայակոչված՝ «հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված ապացույցի օգտագործումը» չի կարող Խորհրդի 14.03.2022 թվականի թիվ ԲԴԽ-24-Ո-Կ-6 որոշման վերանայման հիմք հանդիսանալ, քանի որ Խորհուրդը նույն որոշմամբ, անդրադառնալով ապացույցի թույլատրելիության հարցին, արդեն իսկ դիրքորոշում է հայտնել նշված ապացույցի՝ օրենքի խախտմամբ ձեռք բերված լինելու հավանականության վերաբերյալ, հետևաբար, տվյալ պարագայում բացակայում են Օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված միաժամանակյա վավերապայմանները, այն է՝ նշված հանգամանքի գոյություն ունենալը կարգապահական վարույթի ընթացքում, դրա հայտնի չլինելը և հայտնի լինելու անհնարինությունը միջնորդություն ներկայացրած անձին ու Բարձրագույն դատական խորհրդին, ինչպես նաև այդ հանգամանքի՝ կարգապահական վարույթի համար էական նշանակություն ունենալը:

Ինչ վերաբերում է Դիմողին վարչական պատասխանատվության ենթարկելու հիմքերի բացակայության պայմաններում Խորհրդի 14.03.2022 թվականի թիվ ԲԴԽ-24-Ո-Կ-6 որոշումն Օրենսգրքի 157-րդ հոդվածի կիրառմամբ վերանայման ենթակա լինելու մասին փաստարկին, ապա ապացույցի օրենքի խախտմամբ ձեռք բերված լինելու հավանականության վերաբերյալ արտահայտված դիրքորոշման պարագայում Դիմողին վարչական պատասխանատվության ենթարկելու հիմքերի բացակայության հաստատված լինելը կարգապահական վարույթի համար էական նշանակություն ունենալ չի կարող և, հետևաբար, չի կարող նաև վերոնշյալ որոշման վերանայման հիմք հանդիսանալ: Խորհուրդը եզրահանգել է, որ Ս. Իսկանդարյանի կողմից վկայակոչված՝ նոր երևան եկած թվով երկու ինքնուրույն հանգամանքները չեն բավարարում Օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված վերանայման համար անհրաժեշտ վավերապայմաններին, ուստի Խորհրդի՝ «Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Սիմա Իսկանդարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ» 14.03.2022 թվականի թիվ ԲԴԽ-24-Ո-Կ-6 որոշման վերանայման հիմքերը բացակայում են:

Այսպիսով, թեև վերանայման վարույթները նախաձեռնվել են տարբեր հիմքերով, Բարձրագույն դատական խորհուրդը պահպանել է իր նախկին որոշումները՝ կրկին հաստատելով դատավորների կողմից թույլ տրված էական կարգապահական խախտումները և վերստին կիրառելով կամ ուժի մեջ թողնելով լիազորությունների դադարեցում կարգապահական տույժը:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

2025 թվականի ընթացքում Բարձրագույն դատական խորհրդի կողմից քննվել են 14 վարույթներ, որոնցից 8-ը նախաձեռնվել են Արդարադատության նախարարի կողմից, 5-ը՝ Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից, 1-ը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից:

Խորհրդի կողմից քննված վարույթների հիմնական մասը վերաբերում է դատավարական իրավունքի նորմերի խախտումներին, մասնավորապես՝ դատական ակտերի ուշ հրապարակմանը կամ ուշացումով կողմերին տրամադրմանը և դատավարական երաշխիքների ոչ պատշաճ ապահովմանը, ինչպես նաև դատավորների վարքագծին և հանրային վստահությանը վերաբերող հարցերի՝ շահերի բախման հնարավոր իրավիճակներ, ինքնաբացարկի խնդիրներ, դատավորի կողմից ոչ պատշաճ վարքագծի դրսևորումներ: Վարույթներից մի քանիսում արձանագրվել են արդար դատաքննության իրավունքի երաշխիքների խախտման հետ կապված խնդիրներ, այդ թվում՝ մեղադրյալի լռելու իրավունքի չպարզաբանման, դատավարական իրավունքների ոչ պատշաճ իրացման հարցեր, ինչպես նաև դատավարական իրավունքի այնպիսի խախտումներ, որոնք հանգեցրել են անձանց ազատության իրավունքի սահմանափակման դեպքերի:

Բարձրագույն դատական խորհրդում վարույթների քննությունը հիմնականում ապահովել է դատավորների ընթացակարգային իրավունքների իրացումը և իրականացվել է հրապարակային կարգով:

Խորհրդի կողմից կարգապահական տույժերի ընտրության պրակտիկան շարունակում է վերհանել դրանց համաչափության և հիմնավորվածության, ինչպես նաև իրավական որոշակիության հիմնահարցեր, այդ թվում՝ կոնկրետ տույժի ընտրությունը՝ դատավորին վերագրվող խախտման ծանրության և հետևանքների առաջացման համատեքստում: Տույժերի անհամաչափ և չհիմնավորված կիրառման տարբերությունները կարող են ձևավորել ընտրովի մոտեցման կամ անհավասար վերաբերմունքի ընկալում և բացասաբար անդրադառնալ դատական իշխանության նկատմամբ վստահության վրա:

Արձանագրվել են վարույթներ, որոնք առնչությամբ կայացված որոշմամբ բացակայել է խախտման փաստացի հետևանքների և դատական իշխանության հեղինակության վրա ազդեցության, ինչպես նաև մեղմացնող և ծանրացնող հանգամանքների ամբողջական գնահատումը:

2025թ. ընթացքում Խորհրդի կողմից նոր կամ նոր երևան եկած հանգամանքի հիմքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշման վերանայման 4 դիմում է քննվել, որոնցից մեկով վերանայման վարույթ հարուցելու վերաբերյալ դատավորի դիմումը մերժվել է գրավոր ընթացակարգով: Դիտարկված երեք վերանայման վարույթների արդյունքներով

դատավորների նկատմամբ կիրառվել են նախկինում կիրառված կարգապահական տույժը՝ նույնանման հիմնավորումներով:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մշակել և ներդնել կարգապահական տույժերի ընտրության և նշանակման համաչափության ու հիմնավորվածության չափանիշներ՝ միասնական և կանխատեսելի պրակտիկա ապահովելու համար, այդ թվում՝ հստակեցնել կարգապահական խախտումների, դրանց ծանրության և հետևանքների գնահատման չափանիշները,
- Բարձրագույն դատական խորհրդի որոշումներում առավել մանրամասն հիմնավորել կոնկրետ վարույթով կիրառված տույժերի ընտրությունը,
- Բարձրագույն դատական խորհրդի որոշումներում անդրադառնալ մեղմացնող և ծանրացնող հանգամանքներին, ինչպես նաև դատավորի նախկին կարգապահական պատմությանը՝ տույժերի անհատականացման նպատակով,
- Վերանայման վարույթներով Խորհրդի կողմից կայացվող որոշումներով անդրադառնալ վերանայման բոլոր հիմքերին՝ հիմնավորելով եզրահանգումները,
- Ուժեղացնել դատավորների վերապատրաստումները դատավարական երաշխիքների, արդար դատաքննության իրավունքի և դատավորի վարքագծի կանոնների վերաբերյալ:
- Մշակել շահերի բախման և ինքնաբացարկի հարցերի գնահատման հստակ ուղեցույցներ՝ դատավորի անկախության և անաչառության նկատմամբ վստահության ամրապնդման նպատակով:
- Ներդնել կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշման բողոքարկման գործուն և արդյունավետ մեխանիզմ:
- Դատավարական ժամկետների խախտման հիմքով հարուցվող վարույթների պարագայում քննարկման առարկա դարձնել նաև դատավորների ծանրաբեռնվածության համակարգային խնդիրների լուծման հնարավորությունները: